

Amundi

Investment Solutions

Trust multi-asset

Ներդրումային
հնաստիճան

2026 թվականի Ներդրումային հեռանկարներ

Անդադար ընթացք

2025Թ. ՆՈՅԵՄԲԵՐ | Խաչաձև ակտիվներում ներդրումների ռազմավարություն. հատուկ թողարկում

Բացառապես պրոֆեսիոնալ հաճախորդների, ներդրումային ծառայություններ մատուցողների և ֆինանսական ոլորտի ցանկացած այլ մասնագետի համար հատուկ պատրաստված մարքեթինգային նյութ

Բովանդակություն

2026

ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2026 թվականի հիմնական հայեցակետերը

➤ [04](#)

Անդադար ընթացք | *Բնֆորաֆիկա*

➤ [05](#)

Միջավայրի ստեղծումը | Նոր ռեժիմը պահանջում է նոր մտածելակերպ

➤ [06](#)

Թեժ բանավեճեր

[08](#)

Խոշոր խնդիրը լուծելիս. անցում, ոչ թե անկում

[09](#)

Աշխարհաքաղաքականություն | «Կառավարվող խառնաշփոթ»՝ արտառոց դեպքերի

[14](#)

համար հնարավորությամբ

Ակտիվների դինամիկ բաշխում | Ռիսկերը պահպանվում են, ռիսկերի հավասարակշռում

[16](#)

Բաժնետոմսեր | Գլոբալ տեսանկյուն՝ տեխնոլոգիական մրցավազքից դուրս

[17](#)

Պատասխանատու ներդրումներ | Կայուն աճի խթանում

[20](#)

Ֆիքսված եկամուտներ՝ նոր քաղաքական մրցավազքում

[21](#)

ԱՄՆ դուլարի թուլություն՝ ձգձգված, սակայն չավարտված

[23](#)

Եվրոպայի ուղին շարունակվում է

[25](#)

Չարգացող շուկաներում ուժերի տեղաշարժ

[28](#)

Մասնավոր շուկաներ | Ավելի բարենպաստ պայմաններ, ավելի հստակ ընտրողականություն

[30](#)

Հեջավորման ֆոնդեր | Մակրո և միկրո այժա ստեղծման միջև հավասարակշռություն

[31](#)

Ներդրումային հայեցակետեր

➤ [32](#)

Բաժնետոմսերի հեռանկարներ, 2026թ. 1-ին կես

➤ [33](#)

Ֆիքսված եկամտի հեռանկարներ, 2026թ. 1-ին կես

➤ [34](#)

Մակրոտնտեսական եվ ֆինանսական շուկաների վերաբերյալ կանխատեսումներ

➤ [35](#)

Հեղինակներ

➤ [37](#)

Ամունդի ներդրումային ինստիտուտի մասին

➤ [38](#)

Պատասխանատվության սահմանափակման մասին հայտարարություն

➤ [39](#)



ՄՈՆԻԿԱ ԴԵՖԵՆԴ

Ամունդի ներդրումային
ինստիտուտի ղեկավար

Վերահսկվող խառնաշփոթ

Տնտեսությունը հարմարվում է «վերահսկվող խառնաշփոթի» նոր ռեժիմին: Տեխնոլոգիաների գլխավորած փոխակերպումը, ֆիսկալ խթանումը և արդյունաբերական քաղաքականությունը պահպանում են ակտիվությունը և հանգեցնում նոր հաղթողների առաջացմանը: Գնաճը դառնում է կառուցվածքային ուղղություն, որը ներդրողները պետք է հաշվի առնեն իրենց բաշխումներում:

Դիվերսիֆիկացիայի պահը

Դիվերսիֆիկացիան շարունակում է մնալ ամենարդյունավետ պաշտպանությունը բաժնետոմսերի կենտրոնացված շուկաների և բարձր գնահատումների աշխարհում: Ռիսկերը մեղմելու և հնարավորություններից օգտվելու համար ներդրողների պորտֆելները պետք է վերահավասարակշռվեն ըստ ոճերի, ոլորտների, չափերի և տարածաշրջանների, հատկապես՝ Չարգացող շուկաների և եվրոպական ակտիվների դեպքում:



ՎԻՆՍԵՆԹ ՄՈՐՏԻԵ

Խմբի Գլխավոր ներդրումային
ղեկավար

Եվրոպայի փոխակերպման փուլը

Եվրոպան շարունակում է իր ուղին, որի ընթացքում բարեփոխումները, պաշտպանությանն ուղղված ներդրումները և արդյունաբերական քաղաքականությունը վերածնափորում են նրա ներդրումային լանդշաֆտը: Մենք հնարավորություններ ենք տեսնում եվրոյով վարկերում, ենթակառուցվածքներում և ռազմավարական ինքնավարության ուղղություններում, որոնք կարող են վերափոխել Եվրոպայի ֆինանսական Էկոհամակարգը և օգնել չափավոր աճից անցում կատարել դեպի ավելի կայուն երկարաժամկետ զարգացում:



ՖԻԼԻՊ ԴԵ ՕՐԳԵՎԱՆ

Խմբի Գլխավոր ներդրումային
ղեկավարի տեղակալ

2026թ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ

Անդադար ընթացք

2026 թվականի հիմնական հայեցակետեր

Շրջափուլը շարունակվում է. անցում, ոչ թե անկում

1

2026 թվականը կլինի անցումային տարի, քանի որ համաշխարհային տնտեսությունը հարմարվում է «վերահսկվող խառնաշփոթի» ռեժիմին: ԱՐ-ով պայմանավորված կապիտալ ծախսերը, արդյունաբերական քաղաքականության փոփոխությունները, սակագների նկատմամբ բիզնեսի ավելի մեծ դիմակայունությունը և հավանական դրամավարկային մեղմացումը պետք է պահպանեն ակտիվությունը և երկարացնեն ցիկլը: Ներդրողները պետք է վերանայեն բաժնետոմսերի կենսորոնացումը և գնահատումների ռիսկերը, աճող պետական պարտքը, աշխարհաքաղաքական ուժերի բախումները և արտադրության վերատեղայնացման ու էներգետիկ անցման պատճառով կայուն գնաճը: Համաշխարհային ՀՆԱ-ի աճը 2026 թվականին կլինի չափավոր, սակայն դիմակայուն՝ մինչև 3 տոկոս:

Դիվերսիֆիկացիա՝ վերահսկվող խառնաշփոթի ժամանակաշրջանում

2

«Վերահսկվող խառնաշփոթը», որի ժամանակ կառավարություններն ու բիզնեսները ձգտում են պահպանել առևտրային և ներդրումային հոսքերը, կվերասահմանի հնարավորությունները համաշխարհային մակարդակում: 2026 թվականի համար մեր բազային սցենարը մեղմ ռիսկային է՝ բաժնետոմսերի և ներդրումային դասի վարկերի (Investment Grade) նկատմամբ հակվածությամբ: Խոցելիության և գերազնահատումների հետևանքով առաջացող լուրջ ռիսկերի պայմաններում պորտֆելները պետք է համադրեն աճի ազդեցությունը ոսկու, մի շարք արժույթների (ճապոնական իեն, Եվրո) և գնաճին կցված գործիքների հետ հեջավորմամբ, ինչպես նաև մասնավոր շուկաներում ավելի մեծ, սակայն ընտրողական բաշխումներով: Մասնավոր վարկը և ենթակառուցվածքների ու շաղկապային կենտրոնում են՝ եկամուտների և գնաճի տեսլերի դիմակայունության բարելավման համար, ինչպես նաև ռազմավարական ուղղություններից օգտվելու համար, ինչպիսիք են՝ էլեկտրայնացումը, արտադրության վերատեղայնացումը, ԱՐ-ն և մասնավոր կապիտալի կայուն պահանջարկը, հատկապես Եվրոպայում:

Բաժնետոմսերի դեպքում պետք է լայն մտածել և փնտրել ոլորտներ՝ տեխնոլոգիական մրցավազքի դուրս

3

Տեխնոլոգիայի գծով կապիտալ ծախսերի ցիկլը շարունակում է մնալ առանցքային, սակայն տեխնոլոգիական ուղղությունն ընդլայնվում է ԱՄՆ-ից դուրս՝ դեպի Չինաստան, Թայվան, Հնդկաստան, Եվրոպա և Ճապոնիա: ԱՄՆ գերխոշոր կապիտալով ընկերությունների կենտրոնացման ռիսկը և ԱՄՆ բացառիկության մարտերը հավանականությունը վկայում են աշխարհագրական և ոլորտային դիվերսիֆիկացիայի անհրաժեշտության մասին: Մենք նախընտրում ենք համադրել ԱՐ գծով ներդրումները պաշտպանական և ցիկլային այնպիսի ուղղությունների հետ, ինչպիսիք են ֆինանսական և արդյունաբերական ոլորտները, որոնք կօգտվեն ավելի բարձր ներդրումներից, պաշտպանության ոլորտում գործող ընկերությունները, որոնք կապված են անվտանգության գծով ծախսերի հետ, և կանաչ անցման բաժնետոմսերը, որոնք կապված են էլեկտրայնացման և էներգետիկ ցանցերի հետ:

Դրամավարկային-ֆիսկալ փոխգործակցությունը կապահովի ֆիքսված եկամտի հնարավորությունները

4


Շուկաները գործելու են ըստ համապատասխան քաղաքականության ընտրության: ԱՄՆ պարտքն աննախադեպ բարձր է, ինչը խորացնում է Դաշնային պահուստի անկախության ռիսկերը՝ գնաճի դեռևս թիրախից բարձր լինելու պայմաններում: Ուժերի այսպիսի հավասարակշռությունը պետք է պահի ԱՄՆ պարտատոմսերի եկամտաբերությունն իր սահմաններում, ինչը նպաստավոր է ժամկետայնության մասով մարտավարական դիրքորոշման և գնաճի հետևանքներից պաշտպանվելու հարցում: 2026 թվականին Եվրոպական պարտատոմսերը շարունակում են առանցքային մնալ գլոբալ ներդրողների համար՝ ԵՄ ռիսկային պարտատոմսերի (peripheral bonds) և ՄԹ պետական պարտատոմսերի վրա առանձնահատուկ կենտրոնացմամբ: Վարկերի մասով նախընտրում ենք ամուր հիմունքներով Եվրո ներդրումային դասի վարկերը (Investment Grade) և զգուշավոր ենք ԱՄՆ բարձր եկամտաբերության նկատմամբ, որը ենթակա է տարածաշրջանային բանկերի և սպառողից կախվածության ռիսկերին: Մենք կարծում ենք, որ դուրսը կշարունակի թուլանալ, սակայն այդ գործընթացը գծային չի լինի:

Չարագող շուկաները և Եվրոպան՝ երկարաժամկետ զարգացման երկու տարբեր շարժիչներ

5

Չարագող շուկաներում և Եվրոպայում հատվում են կարճաժամկետ զարգացումն ու երկարաժամկետ հնարավորությունները: Չարագող շուկաների աշխուժացումը շարունակվելու է նաև 2026 թվականին՝ թույլ դոլարի, Դաշնային պահուստի կողմից տոկոսարդյույթի հավանական իջեցումների և Չարագող շուկաների աճի առավելության շնորհիվ նպաստավոր պայմաններ են ստեղծվում Չարագող շուկաների պարտատոմսերի եկամտաբերության և Չարագող շուկաների մի շարք բաժնետոմսերի համար: Եվրոպայի գրավչությունը պետք է աճի տարվա ընթացքում, քանի որ բարեփոխումները՝ համարված պաշտպանության և ենթակառուցվածքների ծախսերով, կվերածվեն շոշափելի հնարավորությունների՝ հատկապես Եվրոյով վարկերում և փոքր ու միջին կապիտալիզացիայով բաժնետոմսերում (կենտրոնանալով ներքին միտումների և գրավիչ գնահատումների վրա):

Շրջափուլն ապահովելու ...



... և ռիսկերը կառավարելու ուժերը

2026 թվականի ներդրումային ուղղություններ

Դիվերսիֆիկացիա վերահսկվող խառնաշփոթի ժամանակաշրջանում

Մենք կանգնած ենք վերահսկվող խառնաշփոթի ժամանակաշրջանի առջև՝ բազմաբևեռ աշխարհ, որը վերափոխվում է տեխնոլոգիական հեղափոխության և ֆիսկալ տարբերակումների միջոցով: Գնաճային ռիսկերը դարձել են ավելի կառուցվածքային՝ պայմանավորված արտադրության վերատեղայնացմամբ, կլիմայական անցմամբ և առևտրային խոչընդոտներով: Սա պահանջում է ռիսկի ընտրողական ստանձնում և ավելացված դիվերսիֆիկացիա արտաբնույթի, ոսկու և իրական ակտիվների դեպքում:



Գլոբալ մտածելակերպ. բաժնետոմսեր տեխնոլոգիական մրցավազքից դուրս

Եկամտաբերության կտրուկ աճը, Դաշնային պահուստի տոկոսադրույքների իջեցումները և սպասվածից ավելի ուժեղ տնտեսական դիմակայունությունը նպաստում են աշխուժացմանը: Կենտրոնացման և խոցելիության ռիսկերը պահանջում են գլոբալ, դիվերսիֆիկացված որոնումներ այս փոխակերպվող ժամանակաշրջանի հաղթողների համար:



Կայուն աճին նպաստելը

ԱՐ իրադրությունը և տեխնոլոգիական փոխակերպումը բարձրացնում են էներգիայի պահանջարկը գրոյական արտանետումների անցման ֆոնին: Սա բացում է հնարավորություններ կլիմայական ուղղվածությամբ բաժնետոմսերում, կայուն ենթակառուցվածքներում և կանաչ պարտատոմսերում ներդրումների առումով:



Պարտատոմսեր նոր քաղաքական կարգում

ԱՄՆ պետական պարտքի բարձր և աճող մակարդակը, ինչպես նաև թույլ ԱՄՆ դոլարը, հավանաբար կուժեղացնեն համաշխարհային պարտատոմսերի դիվերսիֆիկացիայի պահանջարկը: Այս նոր պարտադիմում նախընտրում ենք եվրոպական ֆիքսված եկամտաբերությունը, իսկ ԱՄՆ-ում՝ ներդրումային դասի վարկերը (Investment Grade)՝ ավելի անկայուն ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի փոխարեն:



Եվրոպայի ուղին շարունակվում է

Բարեփոխումները, պաշտպանության և ենթակառուցվածքների խթանումը, ինչպես նաև ռազմավարական ինքնավարության ուղղված արդյունաբերական քաղաքականությունները կարող են վերափոխել Եվրոպայի մակրո-ֆինանսական Եկրհամակարգը: Սա կարող է բացել հնարավորություններ եվրոյով կորպորատիվ վարկում, փոքր և միջին կապիտալիզացիայով բաժնետոմսերում և թեմաներում՝ կապված պաշտպանության, ենթակառուցվածքների և ռազմավարական ինքնավարության հետ:



Կառուցվածքային տեղափոխումներ Չարգացող շուկաներում

Լրացուցիչ աճը և Դաշնային պահուստի սպասվող իջեցումները պետք է նպաստեն զարգացող շուկաների հնարավորություններին՝ տեղաշարժվող աշխարհաքաղաքական հավասարակշռության ֆոնին: Չարգացող շուկաների պարտատոմսերն առանձնանում են բարձր եկամտունեքով և դիվերսիֆիկացիայով, մինչդեռ զարգացող շուկաների բաժնետոմսերն առաջարկում են դիվերսիֆիկացված հնարավորությունների շարք՝ Չինաստանի տեխնոլոգիաներից և հազվագյուտ հողերից մինչև «Make in Հնդկաստան» ծրագրերը:



ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՏԵՂՈՒՄ

Նոր ռեժիմը պահանջում է նոր մտածելակերպ

Անցյալ տարի շուկայական աշխուժացումը բնութագրվում էր դիմակայունությամբ, որն էլ, ըստ ամենայնի, կշարունակվի 2026 թվականին: Կշարունակվեն նաև որոշ ակտիվների գների պարադոքսները, որոնք տեղի են ունենում, երբ համաշխարհային տնտեսությունն անցում է կատարում նոր, նորարարության վրա հիմնված ռեժիմի և երբ աշխարհաքաղաքականությունը մտնում է վերահսկվող խառնաշփոթի փուլ:


Այս փոփոխությունները կվերակառուցեն տնտեսական և ներդրումային ցիկլերի ընթացքը: Ավելի երկարաժամկետ հեռանկարում արհեստական բանականությունը (ԱԲ) կարող է բարձրացնել արտադրողականությունը և արմատապես փոխել տնտեսական ու ֆինանսական դինամիկան: Ավելի անմիջական ազդեցության առումով մենք ակնկալում ենք հսկայական կապիտալ ծախսերի շարունակական աճ արհեստական բանականության և հարակից ոլորտներում ներառյալ տվյալների կենտրոններն ու տեխնոլոգիան սնուցող էներգիան, չնայած որ ներկա տեմպը երկար ժամանակ կայուն չի կարող լինել:

Այսպիսի ներդրումը կնպաստի ընդհանուր աճին և կապահովի, որ ԱՄՆ-ում հաջորդ տարվա աճի դանդաղումը չվերածվի տնտեսական անկման: Եվրոպայի հեռանկարների վերաբերյալ նույնպես կան լավատեսության հիմքեր, նույնիսկ եթե 2026 թվականին աճը լինի համեստ: Գերմանիայի պաշտպանության և ենթակառուցվածքների վրա կատարվող պետական ծախսերը փոխում են խաղի կանոնները, իսկ Եվրոպական Միությունը բարեփոխումների և ֆինանսական կարգապահության ոլորտում առաջընթաց է արձանագրում, ինչը կօգնի մայրցամաքին հաղթահարել ցնցումները: Մենք նաև ակնկալում ենք, որ Չինաստանում, Հնդկաստանում և ընդհանուր առմամբ զարգացող շուկաներում աճը կմնա դիմակայուն: Միջին Արևելքում արհեստական բանականության ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը նույնպես կգրավի ներդրողների ուշադրությունը:

Այս մակրոտնտեսական ֆոնը, ֆինանսական մատչելի պայմանները, արհեստական բանականության հանդեպ ոգևորությունը և շահույթների բավականին լավ կանխատեսումը ենթադրում են, որ բաժնետոմսերի գնահատումները կարող են ավելի երկար մնալ բարձր, քան նախկինում կանխատեսվում էր: Այնուամենայնիվ, մենք ուշադիր հետևելու ենք ցանկացած նշանի, որ շահույթները կարող են չհամապատասխանել բաժնետոմսերի աճին նպաստող բարձր ակնկալիքներին, հատկապես հաշվի առնելով այն ռիսկը, որ տատանողականություն կտրուկ աճը կարող է հանգեցնել շուկայում իրացվելիության հանկարծակի կրճատմանը:


Այսպիսի ռիսկերի մշտադիտարկումը կենսական նշանակություն ունի, քանի որ որոշ ընկերություններ, որոնք նշված աշխուժացման հիմքում են եղել, միջնաժամկետ հեռանկարում խոցելի են նոր աշխարհաքաղաքական կարգի ցնցումների նկատմամբ: Այս ժամանակաշրջանն առանձնանում է տարբեր ոլորտներում, այդ թվում տեխնոլոգիական ոլորտում մրցակցության առկայությամբ, սակայն որոշ հարցերի շուրջ, օրինակ՝ կլիմայի փոփոխությունը կամ արհեստական բանականության վերահսկողության մեխանիզմները, այնուամենայնիվ ամկա է համագործակցություն: Թեև համաշխարհային տնտեսության կենսական ուժ հանդիսացող առևտրային և ֆինանսական կապերը կարող են վերադասավորվել, դրանց ամբողջությամբ խափանվելու հավանականությունը շատ փոքր է: Ուստի աշխարհաքաղաքական ռիսկը կլինի քրոնիկ, սակայն կառավարելի:

Բաժնետոմսերի գնահատումները մոտենում են պատմական առավելագույնին



Աղբյուրներ՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, Բլումբերգ, Տվյալները՝ 2025թ. նոյեմբերի 6-ի դրությամբ: 20 տարվա կտրվածքով վերլուծություն:

Չնաճի հարցում կենտրոնական բանկերի դիլեման



Աղբյուրներ՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, LSEG տվյալներ: ԱՄՆ հիմնական ՀԱՄԾ, Եվրոգոտու ՍԳՆԻ և ՄԹ ՍԳԻ:

Այս իրավիճակը բարդացնելու է զնաճի կանխատեսումները: Գլոբալ միջնաժամկետ միտումները, ինչպիսիք են արտադրության վերատեղայնացումը և էներգետիկ անցումը, առաջ կբերեն զնաճի ճնշումներ, նույնիսկ երբ կարճաժամկետ ուժերի, այդ թվում՝ սակագների և աշխատավարձային ճնշումների ազդեցությունը տարածվի տնտեսության վեջ: Այս խնդիրն ավելի թույլ է արտահայտված Եվրոգոտում, որտեղ մենք ակնկալում ենք, որ Եվրոպական կենտրոնական բանկը կհասնի զնաճի իր թիրախին: Սակայն **ԱՄՆ զնաճն ավելի երկար ժամանակով բարձր կմնա՝ 2026 թվականին կանխատեսվող մոտ 3 տոկոսի մակարդակով:**

Չնաճի սպասումները մինչ այժմ հաստատուն են՝ շնորհիվ կենտրոնական բանկերի կողմից տասնամյակների ընթացքում կառուցվող վստահության: Սակայն դրամավարկային քաղաքականության անկախությունն այլևս չի կարելի համարել ինքնաբերաբար տրված մի աշխարհում, որտեղ քաղաքական գործիչները, անգամ Միացյալ Նահանգների նման խոշոր զարգացած երկրներում, ավելի ազատ են զգում իրենց ոչ ավանդական քաղաքականություններ վարելու հարցում:

Կենտրոնական բանկերի կողմից քաղաքական ճնշմանը ենթարկվելու ցանկացած նշան կցնցի բոլոր ակտիվների դասերը, հատկապես հիմնական պարտատոմսերի եկամտաբերությունը: Սակայն նույնիսկ առանց նման ցնցման, ներդրողները կարող է ստիպված լինեն վերանայել այն **չափանիշները, որոնք կիրառում են ակտիվների բաշխման համար:** Իրական տոկոսադրույքները կարող են կայունանալ ավելի բարձր մակարդակներում, քան վերջին մի քանի տասնամյակների ընթացքում նորմալ համարվողները: Սա կարող է վերաբերել նաև ցանկացած «blue-chip» ինդեքսի գնահատականներին, որոնցում մեծ կշիռ ունեն նորարարության հետ կապված ընկերությունների բաժնետոմսերը:

Ակտիվների բաշխումը նույնպես պետք է հարմարեցվի, եթե որոշ ավանդական շուկայական հարաբերությունների խաթարումը շարունակվի: Վերջին տարվա ամենաառանձնացողներից մեկը ոսկու ու բաժնետոմսերի գների միաժամանակյա աճն էր: Իսկ ԱՄՆ դոլարն ավելի շատ է շարժվել ռիսկային ակտիվների հետ համատեղ, քան մյուս ավանդական «ապահով ապաստարանները»: **Մենք ակնկալում ենք, որ դուրսը կշարունակի թուլանալ:** Սա կապաստի զարգացող շուկաների ակտիվներին, և, հետևաբար, մենք շարունակում ենք ընդհանուր մտեցում որդեգրել բաժնետոմսերում ներդրումների հարցում: **Ոսկու միտումն էլ ունի հետագա աճի հնարավորություն՝ հաշվի առնելով բազմաբևեռ համակարգի ուղղությամբ կառուցվածքային տեղաշարժը և պորտֆելի դիվերսիֆիկատորների անհրաժեշտությունը:**

Այս շուկայական միտումները նույնպես պայմանավորված կլինեն Միացյալ Նահանգներում և այլ խոշոր զարգացած երկրներում բարձր պարտքի մակարդակների վերաբերյալ մտահոգություններով: Այս մտահոգություններն արտացոլվելու են ֆիքսված եկամուտների շուկայում, սակայն ԱՄՆ վարչակազմի ցանկությունը՝ կանխել պետական պարտատոմսերի եկամտաբերության չափազանց բարձր կամ չափազանց արագ աճը, նշանակում է, որ **ներդրողները պետք է նույնքան զգուշավոր լինեն ԱՄՆ զանազան տարանի դեմ պայքարելիս, որքան՝ Դաշնային պահուստի դեմ:**

Արդյունքում, **մենք նախընտրում ենք ԱՄՆ գրոյական վնասով եկամտաբերությունը և ակնկալում ենք, որ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հետագա կտրուկ թեքությունը տեղի կունենա միայն 2026 թվականի երկրորդ կեսին:** Ներդրումային դասի վարկային գործիքները (Investment Grade) նույնպես կարող են գրավիչ լինել Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերում, չնայած որ այս տարի պետական հիմնական պարտատոմսերի նկատմամբ սիրողներն արդեն նեղացել են: Մյուս կողմից, թե՛ ամերիկյան, թե՛ եվրոպական բարձր եկամտաբեր վարկային գործիքները կարող են խոցելի լինել: Սա հատկապես ճիշտ կլինի, եթե տնտեսությունն ու շուկաները մինչ այժմ շարժիչ ուժերի դինամիկան կորցնեն:

Այնուամենայնիվ, դա պատճառ չէ խուսափելու ռիսկային ներդրումներից, քանի դեռ արհեստական բանականությունն ու ֆիսկալ քաղաքականությունը տնտեսությունների համար բուժքն են ապահովում: Այդպիսի անորոշության պայմաններում վստահորեն առաջ շարժվելը պահանջում է ներդրողների մտածելակերպի փոփոխություն, սակայն, ամենայն հավանականությամբ, դա կլինի ամենահեռանկարային մտեցումը:

«Դիվերսիֆիկացումն ու ռիսկերի ապահովագրումը թույլ կտան ներդրողներին մեղմել ռիսկերը և միննույն ժամանակ առավելագույնս օգտվել հաջորդ տարի նոր տեխնոլոգիաներով առաջարկվող հնարավորություններից»:


Թեժ քանալներ

2025 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած Ամուսնի ներդրումային սեմինարի ընթացքում մենք հարցեր տվեցինք մեր ներդրումային մասնագետներին՝ օգնելու մեզ սահմանել, թե ինչպիսին կլինի 2026 թվականը տնտեսության և ֆինանսական շուկաների համար:

Ձեր կարծիքով, որո՞նք են ցիկլի հիմնական շարժիչ ուժերը



2026 թվականի վերջում ԱՄՆ Դաշնային պահուստի տոկոսադրույքը (վերին սահմանը) ո՞ր մակարդակում կլինի:



Ըստ ձեզ, ի՞նչը կարող է 2026 թվականին շուկաների անենախաթարող գործոնը լինել: Մեր ներդրումային մասնագետներին

63%

Ավելի բարձր գևաճ **35%**

Ստագֆլյացիա **29%**

Քաղաքական անկայունություն **12%**

ԿԲ-ների քաղաքականացում* **12%**

Մեր ներդրումային մասնագետների 63 տոկոսի կարծիքով՝ մենք գտնվում ենք տնտեսական ցիկլի ուշ փուլում, սակայն մինչև 2026 թվականը տեխնոլոգիայով պայմանավորված ֆինանսական ցիկլի վաղ փուլում:



*Կենտրոնական բանկեր

ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Խոշոր խնդիրը լուծելիս . անցում, ոչ թե անկում

2026 թվականի հեռանկարում կարճաժամկետ դինամիկան գնահատելիս ինքնըստինքյան ի հայտ են գալիս երկարաժամկետ տեղաշարժերը: Մա անցում է, ոչ թե տնտեսական անկում՝ նորարարակենտրոն ժամանակաշրջան, որն առաջ է մղվում արհեստական բանականության վրա հիմնված կապիտալ ծախսերով, պաշտպանության և արդյունաբերական քաղաքականություններով, որոնք ուղղված են ռազմավարական ինքնավարության ապահովմանը, որտեղ տեղի է ունենում կապիտալի, աճի և ռիսկերի վերաբաշխում: Այս գործոնները վերաձևավորում են ուժերի հավասարակշռությունը և վերակառուցում առևտուրը, ինչը բարձրացնում է ծախսերը և զսպում ակտիվությունը, սակայն չի հանգեցնում գլոբալիզացիայի փլուզմանը:

Դեռևս շուտ է ասել, թե արդյոք արհեստական բանականության հաշվին արտադրողականության աճը կհավասարակշռի ժողովրդագրական խոչընդոտները, թեև ԱՄՆ ՏՏ ներդրումները մեղմում են սպասվող ներքին պահանջարկի թուլացումը: Բարձր պետական պարտքի դինամիկան առայժմ զսպված է հարկային նվազեցումներով (օրինակ՝ «Մեկ մեծ, գեղեցիկ օրինագիծ») և պաշտպանության ու ենթակառուցվածքների վրա ավելացող ծախսերով: Աճը դիմակայուն է, սակայն մոտ է խոցելի, իսկ խոշոր տնտեսություններն ամենայն հավանականությամբ կտրուկ չեն արագացում չեն զրանցի: Գնաճի ռիսկերը դառնում են ավելի կառուցվածքային՝ պայմանավորված ռազմավարական արտադրության վերատեղայնացմամբ և Էներգետիկ անցումով:

Գործընթացն անդադար շարունակվում է՝ ռիսկերի հավասարակշռությամբ

Չնայած սպասվում է, որ սակագների ազդեցությունը կաճի, այդուհանդերձ, մինչ այժմ այդ ազդեցությունը սահմանափակ է եղել: Տնտեսական աճը մեծապես դիմակայուն է եղել, սակայն հաջորդ տարվա հեռանկարը դեռևս խոցելի է շարունակական գնաճի ճնշումների պատճառով: Առևտուրը վերակառուցվում է՝ կենտրոնանալով անվտանգության վրա, իսկ մատակարարման շղթաները վերածնվելով են: Գլխավոր տնտեսական դերակատարներից չի սպասվում, որ Նրանք զգալիորեն արագացնեն իրենց աճի միտումները, քանի որ Նրանք գնահատում են տեխնոլոգիական վերահիմնման առաջընթացը, հիմնականում՝ ԱՄՆ-ում, իսկ Եվրոպայում՝ պաշտպանության ուղղված ծախսերի աճը: Մինչդեռ, Չինաստանը հավասարակշռում է ներքին պահանջարկի համար «ճիշտ բավարար» խթանները և աջակցություն է ցուցաբերում իր ռազմավարական ոլորտներին:

Գնաճը կարծես հաստատուն է, սակայն կենտրոնական բանկերի վրա ճնշումներն աճում են՝ մեծացնելով գնաճի սպասումների ապակայունացման վտանգը, հատկապես՝ ԱՄՆ-ում: Դրամավարկային քաղաքականությունն ընդհանուր առմամբ պատշաճ է գործում, սակայն ֆիսկալ գերիշխանության (կենտրոնական բանկերի նկատմամբ ֆիսկալ ընդլայնումը բավարարելու ճնշում) վտանգն աճում է: Չարագացած և զարգացող տնտեսություններում գնաճի վրա ազդող ճնշման աճը հիմնականում պայմանավորված է պրոցիկլային ֆիսկալ քաղաքականություններով, սակայն կառուցվածքային առումով այն նաև պայմանավորված է ռազմավարական ներմուծումների տեղայնացմամբ և Էներգետիկ անցումով: Չնայած ճկուն, սակայն խոցելի աճի միջավայրում մեղմացման հանդեպ համակրանքը դեռևս առկա է, կենտրոնական բանկերը չպետք է երկար ժամանակ վտանգեն գնաճի իրենց թիրախի իրագործումը:

Կազմավորման փուլում գտնվող առևտրային համաձայնագրերն իրականում չեն նվազեցնում քաղաքական անորոշությունն այն ժամանակ, երբ տնտեսական քաղաքականություններն օգտագործվում են որպես զենք՝ ազգային անվտանգության ծառայության համար: Մենք չենք ակնկալում համաշխարհային առևտրի փլուզում կամ գլոբալիզացիայի հակադարձում, սակայն նկատում ենք մատակարարման շղթաների վերակազմավորման շարունակականության որոշակի թուլացում: Այս դեռևս վաղ փուլերում դա պետք է հանգեցնի ավելի բարձր ծախսերի և ավելի չափավոր ակտիվության:

Ճապոնիա



Նոր վարչապետ Տակաիչիի օրոք Ճապոնիան կանցնի ավելի աջակցող ֆինանսական քաղաքականության: Հաջորդ լրացուցիչ բյուջեն (2025 ֆինանսական տարի) արդեն կներառի 1–2 տոկոսանոց զուտ դեֆիցիտի աճ: Բացի դրանից, Տակաիչին առաջարկել է հանել սահմանափակող ֆինանսական կանոնը և առաջնահերթություն տալ տնտեսական աճին: Ճապոնիայի Բանկը կարող է ստիպված լինել ավելի բարձրացնել տոկոսադրույքները՝ յենի արժեզրկումը չափից ավելի զսպելու համար: Մենք կանխատեսում ենք մեկ բարձրացում մինչև 2025 թվականի վերջը և ևս մեկը 2026 թվականի կեսերին:

Միացյալ Թագավորություն



Նոյեմբերի 26-ի դրությամբ Մեծ Բրիտանիայի բյուջեն լուրջ ռիսկ է, քանի որ կառավարությունը կարող է ստիպված լինել մինչև 2029–30 ֆինանսական տարին կրճատել ավելի քան 30 միլիարդ ֆունտ ստերլինգ՝ ֆիսկալ կանոններին համապատասխանելու համար, եթե Բյուջետային պատասխանատվության գրասենյակը զգալիորեն նվազեցնի իր կատարողականի կանխատեսումները: Կառավարությունը կարծես պատրաստվում է առաջնահերթություն տալ ֆիսկալ վստահելիությանը և վերականգնել ֆիսկալ ոգին: Ակնկալվողից ավելի ուժեղ կոնսոլիդացիան կարող է 2026 թվականին նվազման ռիսկեր ստեղծել ինչպես աճի, այնպես էլ գնաճի համար:

ԱՄՆ դիմակայունություն ու դրա սահմանները

ԱՄՆ տնտեսական աճը պահպանվել է՝ չնայած շարունակական քաղաքական անորոշություններին: Մասնավորապես, 2025 թվականի առաջին կիսամյակում տեխնոլոգիական և արհեստական բանականության հետ կապված ոլորտներում կայիտալ ծախսերը, որպես ընդլայնման աղբյուր, գերազանցել են սպառողական ծախսերը և, ամենայն հավանականությամբ, առաջիկա եռամսյակներում կշարունակեն նպաստել ԱՄՆ տնտեսությանը՝ սպառման թուլացման ֆոնին, ապահովելով աճի նվազագույն շեմը: Այնուամենայնիվ, քանի որ այս ոլորտներում ընդլայնման ընթացիկ տեմպը կարծես կայուն չէ, մենք ակնկալում ենք, որ այս ներդրումները կդանդաղեն իրենց ներկայիս արագ տեմպից, մինչդեռ ընդհանուր արտադրողականության աճի համար ժամանակ կպահանջի: Դրականն այն է, որ ներդրումները կարող են լրացուցիչ խթան ստանալ ապակարգավորման նոր այլիքի արդյունքում:

Մենք կանխատեսում ենք տարվա առաջին կեսին թեթևակի անկում, որին կհետևի երկրորդ կեսի վերականգնումը, իսկ աճը կմնա ներուժի մակարդակից ցածր: Սպառումը կմնա ԱՄՆ տնտեսության հիմնական շարժիչ ուժը, սակայն, ամենայն հավանականությամբ, կթուլանա աշխատաշուկայի սառեցման, իրական աշխատավարձի աճի դանդաղեցման և եկամտային անհավասարության աճի ֆոնին:


Ակնկալվում է, որը գնաճը, որի վրա մինչ այժմ միայն չափավոր են ազդել բարձր սակագները, աստիճանաբար կաճի, քանի որ հետաձգված սակագների փոխանցման և ներգաղթի քաղաքականության փոփոխությունների ազդեցություններն ավելի հստակ կդառնան: Գնային ճնշումները, հետևաբար, պետք է մեղմվեն մինչև 2026 թվականը, թեև ամենայն հավանականությամբ գնաճը կմնա թիրախային ցուցանիշից բարձր:

Այս համատեքստում ակնկալվում է, որ ֆիսկալ քաղաքականությունը մեղմ կոնսոլիդացնող կլինի՝ սակագնային եկամուտների անորոշության պայմաններում, մինչդեռ Դաշնային պահուստը, ամենայն հավանականությամբ, շարունակելու է աստիճանաբար թուլացնել քաղաքականությունը՝ հայտնվելով աշխատաշուկայի բարդ դինամիկայի (ժողովրդագրական և ներգաղթային փոփոխություններ) և մարտահրավերներով լի գնաճային միջավայրի (պահանջարկին և առաջարկին ուղղված գործոններ, ինչպես նաև սակագների փոխանցման ազդեցություն) միջև:

Եվրոպա՝ բարելավման հեռանկարով

Եվրոպայում աճի տեմպը թուլացել է 2025 թվականի ուժեղ մեկնարկից հետո՝ թույլ ներքին պահանջարկի պատճառով: 2026 թվականին ենթակառուցվածքների և պաշտպանության վրա ավելի բարձր ծախսերը բարձրացնում են կանխատեսվող ռիսկերը, որ թույլ արտաքին պահանջարկի պայմաններում, դեռևս վճռորոշ կախվածություն կա ներքին պահանջարկի դիմակայունությունից, դրամավարկային քաղաքականության աջակցությունից և ժամանակին ու արդյունավետ քաղաքականության իրականացումից: Եվրոգոտին կարող է նաև օգտվել տեխնոլոգիական և արհեստական բանականության ներդրումներից, որոնք կարող են օգնել մրցունակության որոշ բացեր փակելու առումով, սակայն այս ոլորտներում ներդրումները զգալիորեն զիջում են ԱՄՆ-ին: Աճի տեմպը ապահովելու համար անհրաժեշտ կլինեն մասնավոր ներդրումներ, որոնք կհամալրեն ենթակառուցվածքներում պետական ներդրումների առանցքային դերը: Այնուամենայնիվ, ենթադրվում է, որ ընդհանուր ֆիսկալ մոտեցումը կմնա մեծապես չեզոք՝ սահմանափակված պարտքի բարձր մակարդակներով և բազմաթիվ երկրներում կոնսոլիդացիայի վրա ազդող ֆիսկալ կանոններով: Գնաճային ճնշումների թուլացման, աճի հնարավոր մակարդակից ցածր տեմպերի և աշխատավարձերի աճի տեմպի դանդաղման պայմաններում, ինչը նվազեցնում է երկրորդ փուլի գնաճային ռիսկերը, եվրոպական կենտրոնական բանկերը, ամենայն հավանականությամբ, կպահպանեն խթանող դիրքորոշումը: մեր կարծիքով՝ ԵԿԲ-ն, ամենայն հավանականությամբ, ավելի շատ կթուլացնի քաղաքականությունը, քան ներկայումս ենթադրում են շուկաները:

Սպառումը և տեխնոլոգիական կապիտալ ծախսերը կշարունակեն լինել ԱՄՆ աճի հիմնական շարժիչ ուժը



Տեխնոլոգիաների և արհեստական բանականության ուղղված կապիտալ ծախսեր

Տեխնոլոգիաների և արհեստական բանականության ուղղված կապիտալ ծախսերը վերջին եռամսյակներում նպաստել են ՀՆԱ-ի աճին, ինչը հարցեր է առաջացնում այս միտման կայունության վերաբերյալ: Այնուամենայնիվ, հարկային նվազեցումները կարող են 2026 թվականին ևս նպաստել այս միտմանը:

Սպառում

Սպառումը պահպանվել է՝ խթանված բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների հարստության էֆեկտներով, սակայն աշխատաշուկայի թուլացումը վկայում է սպառման նվազման ռիսկերի մասին:

Աղբյուր՝ Ամուսնի և Երրորդական ինստիտուտ, Բլոմբերգ: Լայն տեխնոլոգիաներ և ԱԲ վերաբերում է արհեստական բանականության տեխնոլոգիաներին, որոնք լայնորեն կիրառելի են բազմաթիվ ոլորտներում՝ ներառյալ սարքավորումները, տեղեկատվության մշակման սարքավորումները, մտավոր սեփականությունը, ծրագրային ապահովումը, հեռագրությունը և զարգացումը, կառուցվածքները և տվյալների կենտրոնները: ՀՆԱ-ի աճին նպաստող այլ ներդրումներ, ինչպիսիք են պետական ծախսերը, որոշակի ներդրումները և արտահանումները, զենպատկերում չեն մանրամասնեցվում: Տվյալները՝ 2025թ. հոկտեմբերի 28-ի դրությամբ:

Հնդկաստան. ներքին պահանջարկը շարունակում է մնալ աճի հիմնական շարժիչ ուժը

Չնայած ՀՆԱ-ի կանխատեսման վերջին տարբերակին՝ մենք շարունակում ենք ակնկալել որոշակի դանդաղում 2026 թվականին: 2025 թվականի աճը կարծես դիմակայում է՝ չնայած ԱՄՆ սակագների, որոնք թուլացնում են Հնդկաստանի դիրքը՝ համեմատած տարածաշրջանի մյուս դերակատարների հետ: 2026 թվականին մենք կանխատեսում ենք ավելի ցածր սակագների մակարդակ, իսկ տնտեսական աճը կշարունակի պայմանավորված լինել ներքին պահանջարկով, քանի որ հարկային բեռի թեթևացումը (Ապրանքների և ծառայությունների հարկերի փոփոխություններ և եկամտային հարկերի նվազում) և սպասվող ութերորդ աշխատավարձային հանձնաժողովը (սպասվում է մինչև 2026 թվականի հունվար) պետք է խթանեն տնային տնտեսությունների սպառումը:

Մասնավոր ներդրումների վերականգնումը դեռևս անհավասար է և վերջերս հիասթափեցրել է՝ պայմանավորված ընդհանուր խորացված անորոշությամբ: Այնուամենայնիվ, ապակարգավորումը կարող է վերակենդանացնել ներդրումային ցիկլը: Առանց ֆինանսական աջակցության արտաքին խոչընդոտները կազմում են հիմնական բացասական ռիսկը: Պահաճի հիմնական ցուցանիշն է 2026 ֆինանսական տարում կլիմի միջինը մոտ 4–5 տոկոս՝ նպաստավոր մուտնային սեգրևի, մեկնողի և էներգիայի բարենպաստ համաշխարհային գների և Ապրանքների ու ծառայությունների գծով թափանցիկ հարկային համակարգի շնորհիվ: Զանի որ աճը դանդաղում է դիմակայունության վերջին ցուցանիշի համեմատ և կանխատեսվում է ավելի բարձր, բայց ոչ խափանող գնաճային դինամիկա, Հնդկաստանի պահուստային բանկը պետք է շեղվի իր վերջին չեզոք մոտեցումից և առաջիկա 12 ամսում իրականացնի լրացուցիչ 50 բազային կետով կրճատումներ:

Չինաստան: կառուցվածքային նպատակները մրցակցում են խթանման կարճաժամկետ անհրաժեշտության հետ

Չինաստան: կառուցվածքային նպատակները մրցակցում են վերածման կարճաժամկետ անհրաժեշտության հետ

Չինաստանի տնտեսական քաղաքականության դաշտը շարունակում է պայմանավորված լինել 2025 թվականի կեսերին սկսված հակաճգնաժամային արշավով, որի նպատակն է զսպել գների անկումը, ավելորդ հզորությունները և գների ավերիչ պատերազմները՝ սկզբում արևելյան պանելների և էլեկտրոնային առևտրի հարթակների ոլորտներում, իսկ այժմ դրանք տարածվում են նաև այլ ոլորտների վրա: Չնայած այս ջանքերի նպատակն է վերականգնել շահութաբերությունը, դրանց ազդեցությունը կասկածելի է և կարող է մեղմվել նոր ներկայացված 15-րդ հնգամյա պլանի (FYP) ռազմավարական առաջնահերթություններով: Հնգամյա պլանը «ժամանակակից արդյունաբերական համակարգի զարգացումը» հռչակեց գերակա առաջնահերթություն և վերածնունդի գիտության ու տեխնոլոգիաների նպատակները ռազմավարական ինքնուրույնության ուղղությամբ:

Ներքին սպառումը խթանելն այժմ կոնկրետ նպատակ է, սակայն մակրոտնտեսական քաղաքականությունը մնում է ընտրողական և հաճախ արտաքին ցնցումներին արձագանքող: Բացի դրանից, ինքնուրույն տեխնոլոգիական մատակարարման շղթաներին ձգտումը կարող է երբեմն գերակշռել հակաինֆլյուցիոն նպատակները, քանի որ քաղաքականությունն մշակողները պատրաստ են հանդուրժել որոշ ավելցուկային հզորություններ՝ որպես ավելի լայն հակակապակցման նախապատրաստական ռազմավարության մի մաս: Շուկաներում հույսեր կան, որ երկար սպասված առաջարկի և պահանջարկի հավասարակշռությունը փորձարկվելու է 2026 թվականին, երբ կառուցվածքային նպատակները կմրցեն կարճաժամկետ վերածման անհրաժեշտությունների հետ:



Չինաստանի վերահսկողությունը կենսական հանջանկների նկատմամբ. ռազմավարական պայթյուր ռեսուրսների անվտանգության համար

Վերջին շրջանում ԱՄՆ–Չինաստան առևտրային պատերազմի մասին խոսույթը որոշակիորեն հեռացել է սակագների ոլորտից, ինչը շուկայի ուշադրությունը սևեռել է Չինաստանի կողմից կարևոր հանջանկների համաշխարհային մատակարարման նկատմամբ գերակայության վրա: Այս ոլորտն ընդգրկում է պղինձը, նիկելը, կոբալտը, լիթիումը և գրաֆիտը՝ որոնք անհրաժեշտ են կանաչ անցման համար, ինչպես նաև հազվագյուտ երկրաչափական տարրերը (REEs): Նրանց բացառիկ մագնիսական, օպտիկական և կատալիտիկ հատկություններն ավելի քան մեկ դար ինքն են հանդիսացել խոշոր տեխնոլոգիական առաջընթացների համար, ձևավորելով արդյունաբերություններ՝ էլեկտրոնիկայից մինչև վերականգնվող էներգիա: Ներկայումս Չինաստանում է կենտրոնացած համաշխարհային հազվագյուտ հողային տարրերի արդյունահանման մոտ 70%-ը և վերամշակման 90%-ը: Չնայած հանքարդյունաբերությունը համեմատաբար ավելի բազմազան է՝ ԱՄՆ-ի համար առաջնահերթ է զարգացնել սեփական վերամշակման կարողությունները կամ համագործակցել արդեն իսկ գործընթացի առաջադեմ փուլում գտնվող երկրների կամ ընկերությունների հետ:

Մատակարարման շղթայի և տեխնոլոգիական ինքնավարության (ապահովման շղթայի բաժանում) համաշխարհային ձգտումների պայմաններում հազվագյուտ հողային տարրերը դարձել են ավելի ու ավելի կարևոր աշխարհաքաղաքական լծակ: Երբ ԱՄՆ–Չինաստան երկկողմանի հարաբերությունները վատթարանում են, Չինաստանը չի հասպտում ռազմավարական «արտահանման վերահսկողության» խաղաքարտը կիրառելուց: Հազվագյուտ հողային տարրերի տեղաշարժի դադարեցման հետևանքները լայնածավալ են՝ ազդելով ժամանակակից արտադրության, կանաչ տեխնոլոգիաների և պաշտպանական կարողությունների վրա: ԱՄՆ-ի նման երկրներն այլընտրանք չունեն, քան արագացնել իրենց սեփական կայուն մատակարարման շղթաների զարգացումը: Այս առնչությամբ Վաշինգտոնը, մի կողմից, որդեգրում է ազգայնական ռազմավարություն՝ սուբսիդավորելով իր առաջատար ներքին արտադրողին, մյուս կողմից՝ օգտագործում է իր դաշնակիցների ցանցը՝ ընդլայնելով մատակարարման և արտադրական կարողություններն ավստրալիայում, Ճապոնիայում, Թայլանդում և Մալայզիայում: Ասիայում կնքված վերջին գործարքները ցույց են տալիս, որ սակագները հնարավորություններից օգտվելու լծակ են, երբ վտանգված են այլ ռազմավարական նպատակներ:

Չինաստանից մատակարարումները դիվերսիֆիկացնելու ձգտումը ոչ այլ ինչ է, քան ազգային անվտանգություն՝ հրամայական, որը գնալով անտեսում է տնտեսական մասշտաբն ու ծախսարդյունավետությունը: Կենսական հանջանկի ռեսուրսների մատակարարման ապահովումը ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական և աշխարհաքաղաքական անհրաժեշտություն է:

Դիմակայուն աճ՝ վերահսկվող խառնաշփոթի պայմաններում



Մակրոտնտեսական/ֆինանսական սցենարներ և հավանականություններ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍՑԵՆԱՐ

60%

Դիմակայուն աճ՝ վերահսկվող խառնաշփոթի պայմաններում

Մենք գտնվում ենք անցման փուլում՝ ոչ թե անկման, որը պայմանավորված է ԱԲ կապիտալ ծախսերով, պաշտպանության և արդյունաբերական քաղաքականություններով, որոնք վերաբաշխում են կապիտալը և վերածնվող առևտուրը՝ բարձրացնելով ծախսերը և զսպելով ակտիվությունը՝ առանց գլոբալիզացիայի փլուզման:

Պարզ չէ, թե արդյոք ԱԲ արտադրողականությունը կհավասարակշռի ժողովրդագրական խոչընդոտները, թեև ԱՄՆ ՏՏ ներդրումները մեղմում են ներքին պահանջարկը: Բարձր պետական պարտքի ճնշումներն առայժմ մեղմվում են հարկային նվազեցումներով և պաշտպանության ու ենթակառուցվածքների վրա ավելի բարձր ծախսերով:

Աճը դիմակայուն է, սակայն ցիչ հավանական է, որ կտրուկ արագանա, մինչդեռ գնաճի ռիսկերը դառնում են ավելի տեսանելի՝ արտադրության վերատեսչայնացման և էներգետիկ անցման պատճառով: Կենտրոնացումը և գերազնահատումները կառավարման հիմնական ռիսկերն են:

Շուկայի վրա ազդեցություն՝

Դիվերսիֆիկացիայի վրա ուժեղ կենտրոնացում, ռիսկային ակտիվների համար չափավոր դրական ազդեցություն, ԱՄՆ դոլարի թուլացում:



ԱՃԻ ՍՑԵՆԱՐ

10%

Ֆիսկալ խթանման վրա հիմնված դրական զարգացումներ և աշխարհաքաղաքական լարվածության թուլացում

Աշխարհաքաղաքական լարվածության թուլացումը, սակագների թեթևացումը, ԱՄՆ-ում և Գերմանիայում ֆիսկալ միջոցներով խթանվող ներդրումների աճը, ապակարգավորումը, քանակական թուլացումը և արհեստական բանականության վրա հիմնված արտադրողականության աճի համատարած նշաններն այն գործոններն են, որոնք կարող են բարձրացնել շուկայում տրանսպորտային և բարելավվել կանխատեսումները:



Շուկայի վրա ազդեցություն՝

Բաժնետոմսերի և վարկային գործիքների համար դրական, պետական պարտատոմսերի համար բացասական:

ԱՆԿՄԱՆ ՍՑԵՆԱՐ

30%

Քաղաքական/ֆինանսական ցնցում

Քաղաքական անկայունությունը, գնաճի սպասումների ապախարսիսումը, իրացվելիության սահմանափակումը, վարկային իրադարձությունները կամ կենտրոնացված, թանկ շուկայում եկամուտների/գլխավոր կապիտալ ծախսերի հետ կապված հիասթափությունները կարող են առաջացնել անկում:



Շուկայի վրա ազդեցություն՝

Բացասական՝ ռիսկային ակտիվների և երկարաժամկետ պետական պարտատոմսերի համար, դրական՝ ոսկու, հումքային ապրանքների և ինդեքսավորված ապրանքների համար:


Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ 2026թ. ներդրումային հեռանկարներ: Աղյուսակը ներկայացնում է Ամուսնի ներդրումային ինստիտուտի մտավոր կանխատեսումները՝ հիմնված 2025թ. նոյեմբերի 12-ի դրությամբ հասանելի տեղեկատվության վրա, և ներառում է 2025թ. կիրառված սակագները:

Կենտրոնական բանկերի մեղմացնող քաղաքականությունը կշարունակվի 2026 թվականին

Ամուսնի ներդրումային ինստիտուտ, 2026 թվականի վերջի դրությամբ տոկոսադրույքների կանխատեսումներ

<p>Դաշնային պահուստ </p> <p>3.25%</p> <p>Մեկ իջեցում 2025թ. դեկտեմբերին և ևս երկու իջեցում մինչև 2026թ. կեսը:</p> <p>Աշխատանքի շուկան կմնա թույլ: 2026թ. աճը հնարավոր ցուցանիչից ցածր կլինի՝ սպառման դանդաղման և գևաճի տեմպերի նվազման պայմաններում, ինչը թույլ կտա Դաշնային պահուստի տեղափոխվել չեզոք տոկոսադրույքների կենտրոնական միջակայք:</p>	<p>ԵԿԲ </p> <p>1.5%</p> <p>Մինչև 2026թ. կեսը սպասվում են երկու իջեցումներ:</p> <p>Ներքին պահանջարկի աստիճանական վերականգնումը, աշխատավարձերի դանդաղումը և կանխատեսվածից ցածր աճը պետք է նպաստեն քաղաքականության թուլացմանը:</p>	<p>ԱԲ </p> <p>3.25%</p> <p>Մեկ իջեցում 2025թ. դեկտեմբերին և ևս երկու իջեցում 2026 թվականին:</p> <p>Գևաճի տեմպերի նվազումը շարունակվում է՝ ավելի չափավոր աճով: Աշխատանքի շուկան և աշխատավարձային գևաճը թուլանում են, ինչը սահմանափակում է երկրորդ փուլի ազդեցությունների ռիսկերը և թույլ է տալիս Անգլիայի բանկին կատարել լրացուցիչ իջեցումներ:</p>
<p>ՃԲ </p> <p>1.0%</p> <p>Մեկ բարձրացում 2025թ. դեկտեմբերին և մեկը՝ 2026թ. հունիսին:</p> <p>Ճապոնական լինել կրկին ճշման տակ է կառավարության ընդլայնողական ֆինանսական քաղաքականության պատճառով: ՃԲ-ը կարող է ստիպված լինել ևս երկու անգամ բարձրացնել տոկոսադրույքը՝ լենի չափից ավելի արժեքը կունենա զուգակցում համար, սակայն վերջնական տոկոսադրույքը կմնա համեմատաբար ցածր:</p>	<p>ՉԺԲ </p> <p>1.2%</p> <p>2026թ. մայիսին և նոյեմբերին սպասվում են աննշան երկու իջեցումներ:</p> <p>2024 թ. սեպտեմբերին կարճաժամկետ լայնամասշտաբ թուլացման դիրքի փոքր շրջադարձից հետո ՉԺԲ-ն վերադարձել է աստիճանական և ընտրողական թուլացմանը: Մենք ակնկալում ենք, որ այն երկար դադար կունենա մինչև տոկոսադրույքների իջեցումների վերականգնումը, քանի որ սպառողական գների ինդեքսը ժամանակավորապես բարելավվում է:</p>	<p>ՀՊԲ </p> <p>5.00%</p> <p>Մեկ իջեցում 2025թ. դեկտեմբերին և մեկը՝ 2026թ. փետրվարին:</p> <p>ՀՊԲ-ն կպահպանի չեզոք դիրքորոշում, անցնելով թուլացման միայն անհրաժեշտության դեպքում: Մեր կանխատեսումը՝ դիմակայում աճի և գևաճի վերաբերյալ որոշ մի փոքր զերազանցում են 4 տոկոսանոց թիրախային միջակայքի կենտրոնական շենք, թույլ է տալիս սահմանափակ թուլացում առաջիկայում:</p>

Կենտրոնական բանկերի կողմից տոկոսադրույքների նվազեցումները և բարձրացումները



Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ՝ 2025թ. նոյեմբերի 10-ի դրությամբ: ԿԲ կանխատեսումները պատկանում են Ամուսնի ներդրումային ինստիտուտին և 2025թ. նոյեմբերի 10-ի դրությամբ են: Դաշնային պահուստ՝ Դաշնային պահուստային համակարգ, ԵԿԲ՝ Եվրոպական կենտրոնական բանկ, ԱԲ՝ Անգլիայի բանկ, ՃԲ՝ Ճապոնիայի բանկ: Դաշնային պահուստային համակարգի համար ընթացիկ տոկոսադրույքը վերաբերում է թիրախային միջակայքի վերին սահմանին: ՃԲ-ի համար ընթացիկ տոկոսադրույքը վերաբերում է թիրախային միջակայքի վերին սահմանին: ԵԿԲ-ի համար ընթացիկ տոկոսադրույքը վերաբերում է ավանդային գործիքի տոկոսադրույքին: ՉԺԲ՝ Չինաստանի ժողովրդական բանկի հավաքած ռեպո նոտաների 7-օրյա տոկոսադրույքը: ՀՊԲ դրույք՝ ռեպո տոկոսադրույքը: Կանխատեսումները մտավոր են և գործում են ըստ կենտրոնական բանկերի գործող օրացույցի: Տոկոսադրույքների կանխատեսումները՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտի կողմից 2025թ. նոյեմբերի 12 դրությամբ են և վերաբերում են 2026թ. վերջին:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Կառավարվող խառնաշփոթ»՝ արտառոց դեպքերի համար հնարավորությամբ

«Կառավարվող խառնաշփոթ»՝ արտառոց դեպքերի համար հնարավորությամբ

2026 թվականին մենք կմտնաք աշխարհաքաղաքական բարձր ռիսկերի միջավայրում: Սա պայմանավորված է տարբեր խոշոր միտումներով, որոնք դեռևս ընթացքի մեջ են, այդ թվում՝ բազմաբևեռության անցումը, տնտեսական պատերազմը, ԱՄՆ-Չինաստան մրցակցությունը, ինչպես նաև գեների և տեխնոլոգիաների մրցավազը: Ուկրաինայում պատերազմն ու Մերձավոր Արևելքում լարվածությունը լրացուցիչ գործոններ են: Քանի որ աշխարհաքաղաքական ռիսկը շարունակում է մնալ բարձր, նույնպես աճում է անբարենպաստ անակնկալների և լարվածության բռնկումների հավանականությունը: Այնուամենայնիվ, աշխարհաքաղաքականությունը սահմանում է նաև այն միտումները, որոնք հնարավորություններ են ստեղծում: Չնայած անորոշությունը կշարունակվի, 2026 թվականի աշխարհաքաղաքականությունը ներդրողների համար կրեթի և՛ դրական, և՛ բացասական հնարավորություններ:

«Մեծ դիվերսիֆիկացիայից» մինչև «կառավարվող խառնաշփոթ»

Վերջին մեկ տարվա ընթացքում կառավարությունների, կենտրոնական բանկերի և ներդրողների դիվերսիֆիկացման ջանքերի արդյունքում ԱՄՆ դոլարը թուլացավ, ոսկու գներն աճեցին, և ի հայտ եկան նոր առևտրային և անվտանգության համաձայնագրեր: Քանի որ կառավարությունները ձգտում են կարգ ու կանոն հաստատել մի բաժանված աշխարհում, ավելի հավանական են դառնում ավելի շատ մարտավարական երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրերը, որոնք ապահովում են առևտրային և ներդրումային հոսքերի շարունակականությունը:

Ի հայտ եկած «կառավարվող խառնաշփոթը» նոր բազմաբևեռ աշխարհակարգի կողմնակի արդյունք է:

Այլընտրանքային դաշինքները թույլ են տալիս տնտեսական լարվածությունից խուսափել՝ երթուղիները փոխելով, սակայն դրանք նույնպես ռիսկեր են պարունակում, քանի որ երկրները կարող են առերեսվել բախումների: Շատ դաշինքների կառուցումը մեծացնում է անվստահությունը, ինչը խրախուսում է երկրներին ապահովագրել իրենց դիրքերը և վերագինվել:

Հավանական են ավելի շատ պաշտպանական միջոցներ, արտահանման վերահսկողություն և պատժամիջոցներ, քանի որ երկրները պաշտպանում են իրենց շահերը և ճնշում գործադրում նրապակցների վրա: **ԱՄՆ-ը շարունակելու է օգտագործել սակագները որպես տարբեր կառավարչության գործիք, իսկ Չինաստանը կօգտագործի հազվագյուտ հողային տարրերի և այլ կարևոր հանգույցների նկատմամբ իր վերահսկողությունը:** Այլ երկրներ միջոցներ են կիրառում արդյունաբերությունը պաշտպանելու համար (օրինակ՝ ԵՄ վերջին պողպատե սակագները):

Առավել թշնամական համաշխարհային միջավայրը ստիպում է կառավարություններին նվազեցնել մյուսների գերակազմությունը: Այն երկրները, որոնց ռեսուրսներից (սնունդ, էներգիա, հազվագյուտ հողային տարրեր) կախված են մյուսները, կունենան գերակայություն: Չինաստանի հազվագյուտ հողային մետաղների նկատմամբ կախվածությունը նվազեցնելու ջանքերը կմեծանան. օրինակ են ծառայում ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Ճապոնիայի միջև նոր համաձայնագրերը: Սակայն ավելի մեծ ինքնաբավություն ձեռք բերելու համար տարիներ կպահանջվեն:


ԱՄՆ բացառիկության վերաբերյալ հարցերը կպահպանվեն, քանի որ միջանկյալ ընտրությունների նախաշեմին քաղաքական անորոշությունը և «ժողովրդավարության հետընթացը» կուժեղանան: Այս անորոշությունն ու բարձր պարտքի մակարդակները հակադրություն կստեղծեն արհեստական բանականության ոլորտում ընթացող ծախսերի և կարգավորումների թուլացման հետ:

ԱՄՆ արտաքին քաղաքականությունը կմնա անկայուն՝ բնորոշված Թրամփի համոզմունքներով, բիզնես շահերով և ԱՄՆ ռազմավարական առաջնահերթություններով: Օրինակ՝ Թրամփը կարևորում է ԱՄՆ ազդեցությունը Լատինական Ամերիկայում: Նախորդ ԱՄՆ վարչակազմերի անտեման արդյունքում, երբ Չինաստանին թույլ տրվեց տնտեսական և դիվանագիտական առաջնադասումներ իրականացնել, ԱՄՆ ներգրավվածությունը Լատինական Ամերիկայում, ամենայն հավանականությամբ, այժմ կուժեղանա՝ մայրցամաքում կայանալիք կարևոր ընտրությունների ժամանակ (օրինակ՝ Բրազիլիայում):

2025 թվականին թե՛ ԱՄՆ-ն, թե՛ Չինաստանը գիտակցեցին իրենց փոխկապակցվածությունը: ԱՄՆ-ն այժմ հասկանում է, որ առանց չինական հազվագյուտ հողային մետաղների շատ բան չի կարող անել, մինչդեռ Չինաստանի տնտեսական ցուցանիշներն ու սոցիալական պայմանագիրը (քաղաքական վերահսկողություն՝ բարձրության դիմաց) կախված են համաշխարհային առևտրից: 2026 թվականին ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների վատթարացմանը սահման կա: Մարտավարական գործարքները դեռ հնարավոր են, սակայն հարաբերություններում Եական փոփոխություն տեղի չի ունենա:

Գերտերությունների մրցակցությունը կշարունակի խթանել ներդրումներն արհեստական բանականության մրցավազում՝ հանդիսանալով Սառը պատերազմի ժամանակ տեղի ունեցող տեխնոլոգիական և տիեզերական մրցավազի ժամանակակից տարբերակը: Արհեստական բանականության, քվանտային հաշվարկների և բարձրարագ չիպերի նկատմամբ վերահսկողությունն աՄՆ-ն ու Չինաստանը համարում են գերհզորության կարգավիճակ ապահովելու համար անհրաժեշտություն: Ուստի, արհեստական բանականության մեջ ներդրում կատարելը վերաբերում է իշխանությանը և գոյատևմանը: **Արհեստական բանականության մրցավազը, ամենայն հավանականությամբ, նաև կվերաձևափոխի և կուժեղացի աշխարհաքաղաքական դաշինքները**, քանի որ էներգիայի հասանելիությունը դառնում է վճռորոշ: Վերջին ԱԲ գործարքներն աՄՆ-ի, ՄԻԻ-ի և Պարսից ծոցի երկրների միջև տվյալների կենտրոններ տեղակայելու վերաբերյալ օրինակներ են:

Չինաստանն առաջիկա չորս տարիների ընթացքում որոշ ռազմավարական ոլորտներում ամրապնդելու է իր առաջատար դիրքերն ԱՄՆ-ի նկատմամբ:



Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ՝ 2025թ. նոյեմբերի դրությամբ: Աղյուսակը ցույց է տալիս աշխարհաքաղաքականության բանակական/որակական գնահատումը 1-ից 10 սանդղակով՝ ԱՄՆ-ի և Չինաստանի դիրքորոշումները հիմնական ռազմավարական ոլորտներում:

Թայվանի քաղաքական կարգավիճակի վերաբերյալ հարցերը կավելանան, քանի որ ԱՄՆ-ը նվազեցնում է իր ռազմական զսպարականությունն ու աջակցությունը Թայվանին, իսկ Չինաստանն ընդլայնում է իր ազդեցությունն ու աշխարհաքաղաքական ուժը: Չինաստանի նոր ինքնավստահությունը համաշխարհային ասպարեզում կշարունակի նվազեցնել նրա կողմից ԱՄՆ-ի պահանջներին զիջելու հավանականությունը: Այն կշարունակի փորձել դիրքավորվել որպես «սենյակի մեծահասակը», քանի դեռ ԱՄՆ-ն անկայուն է: Այն կգայթակղի երկրներին միանալ Չինաստանի գլխավորած նախաձեռնություններին՝ միաժամանակ ամրապնդելով ԱՄՆ-ի հետ մրցակցության հարցում պատրաստվածությունը: Վերջերս կուսակցությունը կրկնապատկել է իր ջանքերը ժամանակակից արդյունաբերական համակարգի զարգացման ազգային առաջնահերթությունն իրականացնելու գործում, ինչն առանցքային առավելություն է տալիս նրան ԱՄՆ-ի դժվարությունների մեջ գտնվող արդյունաբերական բազայի նկատմամբ:

Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի արդյունքում Եվրոպայում, ամենայն հավանականությամբ, կուժեղանա հիբրիդային պատերազմը: Ռուսաստանը ցանկանում է թուլացնել Ուկրաինայի բարոյական ոգին և նրան ցուցաբերվող աջակցությունը: Մյուս կողմից, Եվրոպական ՆԱՏՕ-ի երկրները ստիպված կլինեն ուժեղացնել զսպան միջոցառումները, ինչը կմեծացնի այն հավանականությունը, որ նրանք կհարվածեն ռուսական թիրախների Եվրոպական օդային տարածքում, ինչի արդյունքում կաճի Եվրոպայի վտանգը: Վերջինս կաճի նաև այն դեպքում, եթե ԱՄՆ-ը որոշի Ուկրաինային տրամադրել Ռուսաստանի տարածք ավելի խորը հարվածներ հասցնելու հնարավորություն: Մենք չենք ակնկալում, որ պատերազմը կավարտվի առաջիկա մի քանի ամիսների ընթացքում: Տարբեր կողմերի նպատակները չեն համընկնում: Ռուսաստանը կարծում է, որ ժամանակն իր օգտին է աշխատում և ձգտում է զինաթափել Ուկրաինային, մինչդեռ Ուկրաինայի և Եվրոպայի համար կարևոր է, որ Ուկրաինան լավ զինված լինի: ԱՄՆ-ը չունի լծակներ պատերազմը դադարեցնելու համար՝ առանց Ռուսաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու: Քիչ հավանական է, որ վերջին ամերիկյան պատժամիջոցները կհանգեցնեն բավարար տնտեսական դժվարությունների: Սակայն դրանք միջնաժամկետ հեռանկարում կարող են ճնշում գործադրել Ռուսաստանի տնտեսության վրա, ստիպելով Պուտինին ավելի բաց լինել զիջումների հարցում:

Չնայած Եվրոպան բազմաթիվ ռիսկերի առջև է կանգնած, կան որոշ դրական նշաններ: Եվրոպական առաջնորդներին հաջողվել է համոզել Թրամին հաշվի առնել Եվրոպայի անվտանգության շահերը: ԵՄ-ն նույնպես զգալի առաջընթաց է գրանցել իր առևտրային հարաբերությունների բազմազանեցման գործում, և պաշտպանության ոլորտում ներդրումները շարունակվում են: Դժվար պայմանները բարենպաստ հող են ստեղծում այնպիսի բարեփոխումների համար, որոնք կարող են բարձրացնել ԵՄ մրցունակությունը: Օրինակ՝ Գերմանիայի կանցլերը վերջերս աջակցություն հայտնեց միության կապիտալի շուկաների ինտեգրմանը: Չնայած խոշոր բարեփոխումները դեռ դժվար է իրականացնել, քաղաքական դիվանդան կարծես փոխվում է: 2026 թվականին նշանակալի ընտրություններ չեն նախատեսվում (բացառությամբ Յուզանդիայի), ուստի ենթադրվում է, որ ԵՄ ներքին համախմբվածությունը կպահպանվի: Օրինակ՝ Բուլղարիան հունվարին կանցնի Եվրոյի:

Միջին Արևելքում քաղաքական անորոշությունը կշարունակվի: Փազայում պատերազմը դադարեցնելու փորձերը կհանդիպեն խոչընդոտների՝ կապված ՀԱՄԱՍ-ի ապառազականացման և Իրան-Իսրայել լարվածության հավանական վերածման հետ: Իրավիճակն ավելի կբարդանա հոկտեմբերին կայանալիք Իսրայելի ընտրությունների պատճառով: Պարսից ծոցում իրավիճակը բավականին տարբեր է, որտեղ արհեստական բանականության մեջ ներդրումները, բազմազան անվտանգության համաձայնագրերը և ԱՄՆ-ի հետ սերտ հարաբերություններն ավելի բարենպաստ հեռանկարներ են ստեղծում:

Եզրափակելով՝ աշխարհաքաղաքական միտումները շարունակելու են ազդել տնտեսության և շուկաների վրա: Ազգային անվտանգության առաջնահերթություններն ավելի ու ավելի են սերտաճում որոշ ռազմավարական ոլորտներում ընկերությունների գնահատականների, ինչպես նաև արտադրողականության և տնտեսական աճի ակնկալիքների հետ: Աշխարհաքաղաքականությունը շարունակելու է ճնշում գործադրել պետական ֆինանսների և գնաճի վրա՝ ներկայիս պայմաններում կառավարությունների համար դժվար է կրճատել արհեստական բանականության և պաշտպանության վրա կատարվող ծախսերը, իսկ աշխարհագրական դիվերսիֆիկացումը կապված է ազգային անվտանգության հետ, և ոչ միայն արդյունավետության: Այսպիսի պայմաններում ոսկին շարունակելու է շահեկան դիրքում լինել:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿ ԲԱԾԽՈՒՄ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿՐԱ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Ռիսկերը պահպանվում են, ռիսկերի հավասարակշռում

2026 թվականի համար տարբեր ակտիվների դիրքը մնում է միջին ռիսկայնության, սակայն դառնում է ավելի դիվերսիֆիկացված: Ցիկլի վերջին փուլում շարունակվում է որակի և շահութաբերության առաջնահերթություն տալը: Այնուամենայնիվ, բարձր գնահատականները և աճող քաղաքական ու աշխարհաքաղաքական ռիսկերը պահանջում են ընտրողական մոտեցում և ռիսկերի ապահովագրում:

Եվրոպայում բարեփոխումներին ուղղված ներդրումներ

Այս համատեքստում ներդրողները պետք է հաշվի առնեն կարճաժամկետ հեռանկարների ազդեցությունն ակտիվների գների վրա, ինչպես նաև ընթացող բարեփոխումների սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը: Ֆիքսված եկամուտների հատվածում, ամենայն հավանականությամբ, գերակշռելու է կարճաժամկետ տնտեսական դինամիկան, մինչդեռ եվրոպական բաժնետոմսերի գրավորությունը կախված կլինի իրականացվող բարեփոխումների ազդեցությունից, հատկապես թերզնահատված հատվածներում, ինչպիսիք են փոքր կապիտալացման բաժնետոմսերը: Մեր կանխատեսմամբ՝ ԱՄՆ դոլարի կառուցվածքային թուլացումը կարող է խթանել ներդրողներին կապիտալը վերաբաշխել Եվրոպայի օգտին. այս միտումը կուժեղանա, եթե բարեփոխումները հանգեցնեն երկարաժամկետ արտադրողականության աճի:

«Ղեկարգ թուլացումը, Գերմանիայում ֆիսկալ խթանման և սպասվող ցիկլային վերականգնման հետ միասին, կարող է ավելի շատ կապիտալ ներգրավել դեպի Եվրոպա:»

2026 թվականի համար մենք դրական ենք Եվրոպայի ֆիքսված եկամուտների նկատմամբ: Աճը ներուժից ցածր է, գնաճը նվազման միտում ունի՝ իջնելով ԵԿԲ-ի թիրախներից ցածր, և ԱՄՆ-ի համեմատ գնահատականները գրավիչ են: 2026 թվականի համար մենք կապիտալ ենք ժամկետայնության նկատմամբ մարտավարական մոտեցում՝ նախապատվությունը տալով Գերմանիայի եկամտաբերության կորի առաջային հատվածին, քանի որ այս պարտատոմսերը կարող են օգտվել հետագա դրամավարկային թուլացումից: Մենք շարունակում ենք ակնկալել, որ 2-10 տարվա եկամտաբերության կորը կխորանա և փնտրում ենք հնարավորություններ ԵՄ ռիսկային պարտատոմսերում:

Եվրո ՆՂ. գերակատարումը կարող է շարունակվել վերահսկվող առաջարկի և անուր հիմնարար ցուցանիշների շնորհիվ:



Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ և Բլումբերգ, 2025 թվականի հոկտեմբերի 30-ի դրությամբ: Եվրոպա բոլորը = Բլումբերգ Եվրո միավորված ինդեքս, Եվրո ՆՂ = Բլումբերգ Եվրո միավորված վարկային ինդեքս


Դրամավարկային քաղաքականության հետագա մեղմացումը կարող է նաև նպաստել եվրոպական վարկային շուկային: Այստեղ մենք նախընտրում ենք ներդրումային դասի (IG) եվրոպարտատոմսերը, որոնք, մեր համոզմամբ, կշարունակեն օգտվել վերահսկվող առաջարկից և ամուր հիմնարար ցուցանիշներից: Բաժնետոմսերի առումով մենք նախընտրում ենք փոքր և միջին կապիտալացման ընկերությունները (SMID): Զանի որ նրանց վաճառքների մոտ երկու երրորդը գալիս է ներքին շուկայից, այս ընկերություններն ավելի քիչ են ենթարկված ԱՄՆ սակագների և այլ արտաքին ցնցումների: Նրանք ներկայումս շրջանառվում են բազմամյա նվազագույն մակարդակներում՝ համեմատած մեծ կապիտալ ունեցող ընկերությունների հետ, և մենք ակնկալում ենք, որ ԵԿԲ-ի քաղաքականության մեղմացումը կդառնա նրանց գերազանց արդյունքների խթան: Ոլորտային տեսանկյունից ավելի կտրուկ եկամտաբերության կորը պետք է օգտակար լինի ֆինանսական ոլորտին, որը, տարվա սկզբից ի վեր բարձր եկամտաբերություն ապահովելուց անկախ, չի թվում գերազանցատված: Հնարավորություններ կան նաև արդյունաբերական ոլորտում էլեկտրականացման և արհեստական բանականության թեմաների առումով:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Եվրոպական պարտատոմսերը (հատկապես կարճաժամկետ) կշահեն դրամավարկային քաղաքականության մեղմացումից: Ակնկալվում է, որ եկամտաբերության կորը կդառնա ավելի կտրուկ, և անհրաժեշտ է օգտվել ներդրումային դասի (IG) վարկային հատվածում առաջացող հնարավորություններից:

Բաժնետոմսերը կշահեն ԱՄՆ դոլարի կառուցվածքային թուլացումից առաջացած գլոբալ դիվերսիֆիկացման միտումից: Փոքր և միջին կապիտալացման ընկերություններն առավել գրավիչ են, ինչպես նաև ֆինանսական, պաշտպանական և ռազմավարական ինքնավարության ոլորտի ընկերությունները:

Փոքր և միջին կապիտալով ընկերությունները կշահեն ավելի ցածր դրույքաչափերից



Տվյալներ՝ Բլումբերգ, Ամուսնի ներդրումային ինստիտուտի հաշվարկներ: Տվյալները 2025 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ

ԶԱՐԳԱՑՈՂ ՇՈՒԿԱՆԵՐ

Կառուցվածքային փոփոխություններ զարգացող շուկաներում

2025 թվականին զարգացող շուկաներին մեծապես հաջողվել է դիմակայել չափազանց անորոշ համաշխարհային միջավայրին, որը բնութագրվում էր աշխարհաքաղաքական լարվածությամբ, առևտրային վեճերով և քաղաքականության լայնածավալ անորոշությամբ: Նրանց դիմակայունության հիմքում էին նաև ավելի հեշտ ֆինանսական պայմանները՝ թույլ դոլարը և ավելի հարմարվողական Դաշնային պահուստը, ինչպես նաև արտահանման պահանջարկի ծավալը: Ներքին շուկաներում աշխատուժի ուժեղ շուկաները և դրամավարկային քաղաքականության մեղմացումը նպաստել են աճին: Կարևոր է, որ մենք ֆիսկալ գերիշխանության որևէ նշան չենք տեսնում, անգամ այնպիսի երկրներում, որոնք ունեն բացառիկ ֆիսկալ պատմություններ, ինչպիսիք են Բրազիլիան կամ Կոլումբիան:

Ցիկլային պատկերը մեծապես անփոփոխ է մնում. զարգացող շուկաների աճը, ամենայն հավանականությամբ, կմնա հորիզոնական, միևնույն ժամանակ գերազանցելով զարգացած շուկաներին: Գնաճի՝ կենտրոնական բանկերի թիրախներին մոտենալը պետք է թույլ տա զգուշավոր թուլացման շարունակմանը, հատկապես եթե Դաշնային պահուստը նվազեցնի տոկոսադրույքները, երբ ԱՄՆ աճը դանդաղի և գնաճի տեմպերը նահանջեն: Կառուցվածքային առումով զարգացող շուկաները բախվում են երեք միաձուլվող ուժերի՝ աշխարհաքաղաքական վերածակավորման, մատակարարման շղթաների վերակազմավորման և սրվող տեխնոլոգիական մրցավազքի, որոնք յուրաքանչյուրը ներկայացնում է և՛ հնարավորություններ, և՛ ռիսկեր:

Ասիան կմնա աճի հիմնական շարժիչ ուժը, նույնիսկ եթե դրա խոշորագույն տնտեսությունները՝ Չինաստանը և Հնդկաստանը, 2026 թվականի ուժեղ աճից հետո զսպեն տեմպերը: Չինաստանում վերևից ներքև կիրառվող միջոցառումները՝ չարաշահումները զսպելու («հակաինփյուլցին» նախաձեռնություն) նպատակով, կշարունակեն լուծել գերարտադրության խնդիրը: Հնդկաստանում իշխանությունները կփորձեն հավասարակշռել աճը ներքին պահանջարկի և կապիտալ ծախսերի միջև:

Մուրոյի դոկտրինան վերադառնում է Արևմտյան կիսագնդում նախագահ Թրամփի օրոք: Որոշ երկրներ ավելի կմոտենան ԱՄՆ-ին, մյուսները նախընտրելու են խորացնել կապերը Գորբալ Չարափի հետ՝ միևնույն ժամանակ չհեռանալով ԱՄՆ վարչակազմից: BRICS նախագիծն ավելի կխորանա, ոչ թե որպես այլընտրանքային և մեկուսացված տնտեսական բլոկ, այլ որպես այլընտրանքային և փոխլրացնող մատակարարման շղթա:

Առաջիկա ամիսներին և եռամսյակներում Լատինական Ամերիկայում կայանալու են մի շարք ընտրություններ: Քաղաքական ճոճանակի տեղաշարժն աջ ուղղությամբ պետք է հանգեցնի բիզնեսի համար ավելի բարենպաստ վարչակազմերի իշխանության գալուստ, որոնք ընտրություններից հետո կխթանեն ավելի ավանդական քաղաքականություններ:

Բրազիլիա. Զվեարկությունները նախատեսված են միայն 2026 թվականի վերջին, ուստի ներկա վարչակազմը պետք է հավասարակշռություն պահպանի ընտրական նկատառումների և ֆինանսական կարգապահության միջև: Առաջարկվող եկամտային հարկի բարեփոխումները և քվադր-ֆինանսական միջոցառումները կարող են բարելավել ընտրական հեռանկարները և միևնույն ժամանակ օգնել պահպանել ֆինանսական նպատակների իրագործումը:

Մեքսիկա. Առաջնահերթ կլինի վերանայել ԱՄՆՄՄՀ-ի որոշ ասպեկտներ՝ հարևան երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու և կապիտալ ներդրումները վերսկսելու համար, որոնք վերջերս թուլացել են անորոշության պատճառով: Թարմացված ԱՄՆՄՄՀ-ն կարող է նմանվել մաքսային միությանը՝ (հարաբերականորեն) ցածր սակագներով:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՑԻՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Զարգացող շուկաների ակտիվների նկատմամբ պահանջարկը կպահպանվի

Բարելավվող տրամադրությունները, զարգացած շուկաների համեմատ շարունակական հավելաճը, գրավիչ գնահատումները և ամուր մակրոտնտեսական հիմքերը լայն հնարավորություններ են ստեղծում: Գլխավոր համատարած ռիսկերն են մնում ամերիկյան դոլարի ուժեղացումը և ԱՄՆ պետական պարտատուների ավելի բարձր եկամտաբերությունը:

Գրավիչ եկամտաբերություն կոշտ արժույթով պարտատուներում, ընտրողական մոտեցում տեղական արժույթով պարտատուների նկատմամբ

Մակրո տնտեսական ֆոնն ու գրավիչ եկամտաբերությունն օժանդակում են կոշտ արժույթով պարտատուներին: Տեղական արժույթով պարտատուների դեպքում մենք նախապատվությունը տալիս ենք Կենտրոնական և Արևելյան Եվրոպային, Լատինական Ամերիկայի որոշակի հատվածներին, ինչպես նաև Հնդկաստանին, Ֆիլիպիններին և Կորեային՝ դիրքերի պահպանման և գնահատման տեսանկյունից:


Գործում են արժեքային և ինպուլսային գործոնները

Մակրո ինպուլսի և միանիշ աճով շահույթների աննշան վերականգնումը նպաստում է արժեքային և ինպուլսային ոճերին՝ նպաստելով EMEA-ին և Լատինական Ամերիկայի որոշ երկրներին, մինչդեռ Ասիան ավելի շատ ուղղորդվում է ոլորտային շահույթներով՝ կապված թվային ակտիվների, Չինաստանի տեխնոլոգիական ոլորտի և արհեստական բանականության հետ:

Չարգացող շուկաների պարտատոմսեր՝ գրավիչ եկամտաբերություն և բարելավվող հիմնարար ցուցանիշներ

Չարգացող շուկաների պարտատոմսերում գրավիչ եկամտաբերություն...


Փողի շուկայի միջոցների իրացվելիությունը գերազանցում է 7 տրիլիոն դոլար՝ ռեկորդային բարձր մակարդակ: Թողարկման եկամտաբերությունը նվազում է, քանի որ ավելակվում է, որ հաշվային պահուստը կլրճանի տոկոսադրույթները, ուստի եկամտի նկատմամբ պահանջարկը պետք է աճի, իսկ զարգացող շուկաների պարտատոմսերն առանձնանում են ավելի բարձր, ավելի գրավիչ եկամտաբերությամբ: 16



Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, Բլումբերգ: Չարգացող շուկաների պարտատոմսերի ինդեքսները վերցված են JPMorgan-ից, ԱՄՆ կորպորատիվ պարտատոմսերի ինդեքսները՝ Բլումբերգից: Բոլոր ինդեքսները ներկայացված են ԱՄՆ դոլարով: Տվյալները՝ 2025թ. հոկտեմբերի 14-ի դրությամբ: IG՝ Ներդրումային դաս, EMHC IG՝ Չարգացած շուկաների կոշտ արժույթի ներդրումային դաս, EMHC HY՝ Չարգացած շուկաների կոշտ արժույթի բարձր եկամտաբերություն, US HY՝ ԱՄՆ բարձր եկամտաբերությամբ պարտատոմսեր, EMLC՝ Չարգացած շուկաների տեղական արժույթ

...գլոբալ ներդրողների օգտին

Չարգացող շուկաների պարտքի պայմանները բարելավվել են՝ ավելի ուժեղ հիմնարար ցուցանիշներ, ավելի ներ սպրեյներ և ավելի ցածր տատանողականություն: ԱՄՆ պարտատոմսերի տատանողականության աճի ֆոնին զարգացող շուկաների պարտքը գլոբալ ներդրողների համար գրավիչ ներդրումային տարբերակ է:



Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, Բլումբերգ, Ներքին աշխատություն: Տվյալները՝ 2025 թվականի սեպտեմբերի 29-ի դրությամբ:

Չարգացող շուկաների բաժնետոմսեր. նոր թափի ԱՄՆ դոլարի թուլության ֆոնին

Դոլարի թուլությունը կառուցվածքային խթան է... որին օժանդակում է մեկ բաժնետոմսի եկամտաբերության աճի կանխատեսումը

Համաշխարհային ինդեքսի համեմատ զարգացող շուկաների բաժնետոմսերի 15 տարվա ընթացքում թերակատարումից հետո, 2025 թվականը նշանակորեց շրջադարձ, որին նպաստեց նաև դոլարի թուլացման փուլի մեկնարկը: Մենք կարծում ենք, որ այս միտումը կարող է շարունակվել և այն նույնպես հենվում է զարգացած շուկաների համեմատ զարգացող շուկաների հավելածի վրա:

Չարգացող շուկաների նկատմամբ հետաքրքրությունն աճում է, ինչին նպաստում է 2026 թվականին մեկ բաժնետոմսի բաժին ընկնող եկամտաբերության աճի վերաբերյալ համաձայնեցված կանխատեսումների բարելավումը: Չնայած մենք կարծում ենք, որ այս կանխատեսումները կարող են չափազանց լավատեսական լինել, մենք նաև ակնկալում ենք, որ 2026 թվականին մեկ բաժնետոմսի բաժին ընկնող եկամտաբերության աճը կլնա նպաստավոր, հատկապես Բրազիլիայում, Հնդկաստանում և Թայվանում:



Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, Բլումբերգ: Տվյալները 2025 թվականի նոյեմբերի 6-ի դրությամբ

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, IBES-ի համաձայնեցված կանխատեսումները հաջորդ 12 ամսվա ՄԲԵ-ի աճի վերաբերյալ: Տվյալները 2025 թվականի նոյեմբերի 6-ի դրությամբ: ՄԲԵ՝ մեկ բաժնետոմսի հաշվով եկամուտ:

ՄԱՍՆԱՎՈՐ ՇՈՒԿԱՆԵՐ

Ավելի բարենպաստ պայմաններ, ավելի հստակ ընտրողականություն

Կորպորատիվ ակտիվության վերականգնումը, որն օժանդակվում է ավելի ցածր տոկոսադրույքներով, կայուն աճով, ապակարգավորմամբ, Գերմանիայում կապիտալ ներդրումների ավելացմամբ և միջին շուկայի կոնսոլիդացիայով, կհանգեցնի գործարքների հոսքի ավելացմանը և էլքի ուղիների վերականգնմանը: Գործարքների ակտիվության և ֆինանսավորման նվազման հետևանքների վերագիտակցման շրջանից հետո գնահատականներն այժմ ավելի մրցունակ են, ինչը մասնավոր հնարավորությունները դարձնում է համեմատաբար գրավիչ ներդրողների համար, ովքեր ձգտում են դիվերսիֆիկացնել իրենց ներդրումները՝ կենտրոնացված և գերազնահատված շուկաներից դուրս: Պահպանվող ռիսկերը՝ պարտքից և դեֆիցիտից մինչև աշխարհաքաղաքականություն, ամրապնդում են դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը, որը պետք է շարունակի նպաստել մասնավոր ակտիվներին: Մենք նախընտրում ենք մասնավոր պարտքը և ենթակառուցվածքային ակտիվները նույն պատճառներով, ինչ նախկինում՝ գնաճի դեմ պաշտպանվածություն, գրավիչ ուղղություններ, ինչպիսիք են Էներգետիկ անվտանգությունը, արտադրության վերատեղայնացման և արհեստական բանականությունը, և մասնավոր կապիտալի նկատմամբ շարունակական պահանջարկ, հատկապես Եվրոպայում: Մենք նաև տեսնում ենք ընտրովի հնարավորություններ մասնավոր բաժնետոմսերում և անշարժ գույքում:

Մասնավոր պարտքի գործիքներն օգտվում են բարձր եկամտաբերության և բարենպաստ վարկային պայմաններից: Միաձուլումների և ձեռքբերումների ակտիվության աճը պետք է խթանի ուղղակի վարկավորման ծավալները, իսկ բարենպաստ վարկային շուկաներն աջակցեն վարկավորմանը: Չնայած մասնավոր պարտքի գործիքների սպրեդները նեղացել են, դրանք դեռևս ավելի լայն են, քան դրանց հանրային համարժեքների դեպքում, և տոկոսադրույքների մեղմման ցիկլը պետք է թեթևացնի վարկառուների վրա ճնշումը և գապի դեֆոլտների աճը: Բանկերի և մասնավոր ակտիվների ֆոնդերի միջև հնարավոր կապերի նկատմամբ ուշադրությունը մեծանում է, սակայն ռիսկը դեռևս համակարգային չէ: Կառավարվող ակտիվների աճին զուգահեռ՝ անհրաժեշտ է ավելի մեծ ընտրողականություն, քանի որ եկամուտները կդառնան ավելի անհատականացված և կախված կառավարիչներից: Արդյունքները կսահմանվեն կարգավորվող ընտրությամբ, խիստ գնահատմամբ, ամուր պայմանագրային երաշխավորություններով, բարձրորակ հովանավորներով և օպերացիոն փորձառությամբ:

Պայմանների մեղմացումն ու կորպորատիվ ակտիվության վերակառուցումը մասնավոր ակտիվները դարձնում են ավելի գրավիչ համեմատած ծանրաբեռնված հանրային շուկաների հետ, սակայն աճող ակտիվների կառավարման ծավալները և անհատական ռիսկերը պահանջում են կարգապահություն, որակյալ գնահատում և արդյունավետ իրականացում:

Մասնավոր կապիտալն աստիճանաբար վերականգնվում է: Գումարների հավաքագրման և գործարքների կնքման դանդաղումը պետք է թուլանա, երբ առաջնային շուկաները վերսկսեն իրենց ակտիվությունը: Ելքի ռազմավարությունները կդառնան ավելի ճկուն՝ շնորհիվ տոկոսադրույքների կայունացման և երկրորդային շուկայում նորարարությունների, ինչը կարող է մեծացնել եկամուտների տեղաբաշխումը: Կայուն կորպորատիվ շահույթաբերությունն ու չափավոր պարտքի մակարդակները նպաստում են արտաքին աճին, իսկ ֆինանսավորման ցածր ծախսերը բարելավում են բաժնետոմսերի հետզուհետեղի տնտեսական արդյունավետությունը: Արտադրության վերատեղայնացման և ապակարգավորման միտումներն ավելացնում են բարենպաստ գործոնները, և ներդրողները, ամենայն հավանականությամբ, կօգտագործեն մասնավոր կապիտալը՝ տեղական շուկայում բարձրորակ փոքր և միջին ձեռնարկություններին հասանելիություն ստանալու համար: Մրցակցային ճնշումն օգնել է վերանայել գնահատումները և ստեղծել հնարավորություններ, սակայն վերականգնումը կլինի աստիճանական՝ ֆինանսավորման շարունակական պակասը և նախորդ էլքերը, որոնք կենտրոնացած էին առաջին կարգի ակտիվների վրա, կսահմանափակեն եկամտաբերությունը: Սպասվող աճի ուղիներն են միջին չափի շուկան, առողջապահությունը, արհեստական բանականությունն ու տվյալների ենթակառուցվածքը, վերականգնվող էներգիան և կիբերանվտանգությունը: Երկրորդային շուկաները պետք է դառնան ավելի գրավիչ: Ինստիտուցիոնալ իրացվելիության և պորտֆելի վերահավասարակշռման պահանջարկը, ինչպես նաև ավելի զարգացած գնորդները կմեծացնեն ծավալները, և ԱՄՆ-ն, ամենայն հավանականությամբ, կմնա գերիշխող շուկա: Սպասվում է գործարքների բազմազանության աճ՝ ապահովված գործարքներ, գլխավոր տնօրենի գլխավորությամբ իրականացվող վերակառուցումներ, անհատական ակտիվների վաճառքներ և գների բարելավում: Բարենպաստ համաշխարհային իրացվելիության պայմաններում հիմնական եկամտաբեր ակտիվները պետք է շրջանառվեն արդար արժեքի մոտ և գրավեն ուժեղ առաջարկներ, մինչդեռ դժվար իրավիճակում գտնվող հատվածները, ինչպիսիք են ուշ փուլում գտնվող վեչուրային ընկերությունները և չհաջողված անշարժ գույքը, կարամարդեն գնահատման հասանելիության կետեր: Կատարման մեխանիզմը կլինի վճարողը այն գնորդները, որոնք ունեն ֆինանսական հաշվետվություններ, ոլորտային փորձ և ճկուն կառուցվածքներ, կստանան լավագույն երկրորդային հնարավորությունները:

Մասնավոր շուկաների կանխատեսում 2026 թվականի առաջին կիսամյակի համար

	Ենթակառուցվածք	Մասնավոր բաժնետոմսեր	Մասնավոր պարտք	Անշարժ գույք
2026թ. հեռանկար	+	+/=	+	+/=
Գնաճի պաշտպանություն	++	=	++	+
Դիվերսիֆիկացման օգուտ	+++	+	+	++

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, 2025թ. նոյեմբերի 18-ի դրությամբ:

ՀԵՋԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԵՐ

Մակրո և միկրո ալֆա ստեղծման միջև հավասարակշռություն

Հեջավորման ֆոնդերի եկամտաբերությունը տարվա սկզբից աճել է 7.2 տոկոսով (HFRI FoHF, սեպտեմբերի դրությամբ): CTA և ֆիքսված եկամուտների ռազմավարությունները հետ են մնացել, մինչդեռ զարգացող շուկաների, երկար/կարճ բաժնետոմսային և գլոբալ մակրո ռազմավարությունները ցույց են տվել լավագույն արդյունքները: **Մակրո և շուկայական մակարդակներում առկա է պարադոքս.** կարճաժամկետ ռիսկերը թվում են ցածր՝ անորոշությունը նվազել է, աճը և գնաճը մոտ են հավասարակշռությանը, մասնավոր հատվածի հիմնարար ցուցանիշներն առողջ են, և տնտեսական տատանումները նվազել են, սակայն միջնաժամկետ սպառնալիքները մնում են նշանակալի, այդ թվում՝ բարձր գնահատականները, պարտքի և դեֆիցիտի աճը, դոլարի հնարավոր արժեզրկումը, խաթարող տեխնոլոգիական փոփոխությունները և ավելի բազմաբևեռ աշխարհաքաղաքական լանդշաֆտը: Մինչև այս հակասությունը չլուծվի, ներդրողները կկենտրոնանան միկրո մակարդակի վերլուծության վրա և կխուսափեն մեծ խաղարկույքներից:

Ժամանակավոր սահմանափակումներ, սակայն միջնաժամկետ աճի ներուժ կա մակրոտնտեսական ոճերի համար: Մակրոտնտեսական կառավարիչներն օգտվել են ոսկու, դոլարի և եկամտաբերության կորերի կենտրոնացված շարժումներից առաջին և երրորդ եռամսյակներում, սակայն թուլացած տնտեսական տատանումները նեղացրին տարածաշրջանային և հարաբերական ցրվածության շահագործման հնարավորությունները: Շատ մակրոտնտեսական ուղղություններ հասունացել են, և գնահատման ակնհայտ անհավասարակշռությունները դարձել են ավելի հազվադեպ: Այնուամենայնիվ, հիմնարար գնագոյացումը մնում է ամուր՝ կառավարիչների համար հանդիսանալով կարևոր աջակցություն, և մենք ակնկալում ենք նոր հնարավորությունների ի հայտ գալը, երբ վերոնշյալ պարադոքսը լուծվի և կենտրոնական բանկերի քննարկումները հավասարակշռված տոկոսադրույքների շուրջ ինտենսիվանան: Մենք շարունակում ենք նախապատվությունը տալ զարգացող շուկաների մենեջերներին և դրական ենք տրամադրված գլոբալ մակրո ռազմավարությունների նկատմամբ, որոնք հաջորդ տարի, ամենայն հավանականությամբ, կգտնեն նոր հնարավորություններ: Մենք շարունակում ենք չեզոք դիրքորոշում ունենալ CTA-ների նկատմամբ որպես հիմնական բաշխում՝ վերջին շրջանում բաժնետոմսերի, պարտատոմսերի և արժույթային շուկաներում միտումների բացակայությունն անսովոր է եղել և կարծես նորմալացվում է:

Արժեթղթերի ընտրության մասնագետները բարենպաստ միջավայրում են: Խաչածն ակտիվների տարբերակման թուլացման ֆոնին միկրոգործունեների վրա կենտրոնանալը մեծացնում է ընտրության հնարավորությունները: Թեմաների ավելի լայն շրջանակը թույլ է տալիս ավելի լավ դիվերսիֆիկացնել պորտֆելը: Ցուցանիշների ամուր հիմնարար գնահատումներն ակնհայտ առավելություն ունեն հիմնարար ռազմավարությունների համար: Հնարավորություններն ավելի հավասարակշռված են երկար և կարճ դիրքերի միջև և աջակցվում են կոնկրետ կատալիզատորներով՝ արհեստական բանականության և տեխնոլոգիաների առաջընթացը, արտադրության վերատեղայնացման, ինչպես նաև ԵՄ պաշտպանական ծախսերի և կապիտալ ներդրումների աճը:

Բաժնետոմսերի շուկայում ուժեղ աճից հետո մենք նախընտրում ենք Ե/4 բաժնետոմսերի չեզոք ռազմավարությունները, թեև կանխատեսում ենք, որ հետագայում փոփոխականությունը կաճի: Ե/4 վարկերում ալֆա ներուժն այսօր սահմանափակ է թվում, սակայն ամբողջական ռազմավարությունները դեռևս առաջարկում են գրավիչ հասանելիություն ԲԵ պարտատոմսերին՝ ընդունելի ռիսկի դիմաց: Վերջին դեֆոլտներից հետո վարկային պայմանների նկատմամբ ավելի մեծ գալուստությունը ժամանակի ընթացքում պետք է բարելավի ալֆայի հեռանկարները:

Իրադարձակենտրոն ռազմավարությունները վերելք են ապրում, հատկապես միաձուլման արբիտրաժը և հատուկ իրավիճակները, և ավելի փոքր չափով՝ դժվարությունների մեջ գտնվող և վերակառուցվող ընկերությունները: Միաձուլման և միացման գործունեության զարգացմանը նպաստում են տնտեսական ցիկլը, առատ իրացվելիությունը, ավելի ցածր տոկոսադրույքները, ապակարգավորման և միջին մակարդակի կորպորատիվ լծակները, մինչդեռ գործարքների ձախողումները դեռևս հազվադեպ են: Գործարքների ավարտման տարբեր ժամկետներն առաջարկում են հավելյալ ռիսկեր և պարզվել: ԱՄՆ ձեռքբերումները սովորաբար ավելի ավանդական են և ունեն միաձուլման ավելի նեղ սփրեդներ: Հակառակ դրան, Եվրոպայի միջին շուկայում առաջարկում է գրավիչ հնարավորություններ՝ ավելի ցածր բաժնետոմսային գնահատականներով, ինչը հանգեցնում է միաձուլման ավելի բարձր սփրեդների: Ռեգիոնալ առումով մենք, հետևաբար, նախընտրում ենք եվրոպական միաձուլման արբիտրաժը:


2026 թվականի համար հեջավորման ֆոնդերի հեռանկարներ

		- -	-	=	+	++
Ե/4 բաժնետոմսեր	Ուղղորդող				←	
	Շուկայական չեզոք					→
Իրադարձակենտրոն	Միաձուլման արբիտրաժ					→
	Հատուկ իրավիճակներ					→
Ֆին արբիտրաժ	Ե/4 վարկ				←	
	Ֆինանսական արբիտրաժ					→
	Մակրո արբիտրաժ					→
Գլոբալ մակրո	Գլոբալ մակրո					→
CTAs	CTAs					→


Ներդրումային հայեցակետեր

2025 թվականի սեպտեմբերին կայացած Ամուսնի ներդրումային աշխատաժողովի ընթացքում մենք մեր ներդրումային մասնագետներին հարցեր ուղղեցինք՝ պարզելու համար, թե ինչպիսին կլինի 2026 թվականը ներդրումների համար:

2026 թվականին S&P 500-ի համար ի՞նչ ընդհանուր եկամտաբերություն եք ակնկալում




Ո՞ր երկիրը կամ տարածաշրջանն առավել կշահի «Մեծ դիվերսիֆիկացիայից»:



2026 թվականին համաշխարհային հավասարակշռված պորտֆելի դրական եկամտաբերության հիմնական շարժիչ ուժը ո՞րն է լինելու:



2026 թվականին մեծ տեխնոլոգիական (Big Tech) ոլորտի առջև ծառայած հիմնական մարտահրավերը ո՞րն է:



ԱՎՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

2026թ. առաջին կիսամյակի դրությամբ բաժնետոմսերի հեռանկարներ

◆ դիբորդում 2025թ. նոյեմբերի 17-ի դրությամբ
 ○ 2026թ. առաջին կիսամյակում շարժման սպասվող ուղղությունը
 → 2026թ. առաջին կիսամյակում փոփոխության ուղղությունը

Բաժնետոմսերի հեռանկարներ



ԱՄՆ	◆	<p>Ընդհանուր առմամբ չեզոք, անցում հավասարակշռվածի՝ կենտրոնացման ռիսկը հաղթահարելու համար</p> <p>Դաշնային պահուստը նվազեցնում է տոկոսադրույթները, միևնույն անկում չի կանխատեսվում: Այս պրոցիկլի դիբորդումը բարենպաստ է ԱՄՆ-ի համար, և Մեծ տեխնոլոգիաներն այժմ MSCI World-ի բարձր բետա գործակից ունեցող հատվածն են: Պատմականորեն, երբ Դաշնային պահուստը նվազեցրել է տոկոսադրույթները, շուկայի փուլզում երբեք չի եղել: սակայն, S&P 500-ի բարձր գնահատումից բացի, կենտրոնացումն ակնհայտ ռիսկ է: Մենք կողմ ենք հավասարակշռված մոտեցմանը:</p>
ԱՄՆ հավասարակշռված	◆ ○ →	
Եվրոպա	○ ◆ ←	<p>Առաջին կիսամյակում դիրքը հավասարակշռվում է, նախքան երկրորդում նոր դիրքեր բացել՝ կենտրոնանալով SMID-ների հնարավորությունների վրա՝ Գերմանիայի ֆինանսական պլանի և ԵԿԲ-ի տոկոսադրույթների կրճատումների ֆոնին:</p> <p>Եվրոպայի շահույթների աճի հետաձգումը և ուժեղ եվրոն չեն օգնել: Առաջին կիսամյակում մենք անցում ենք հավասարակշռված դիրքի, իսկ երկրորդում սպասում ենք նոր հասանելիության կետերի՝ երկարաժամկետ ուղղությունից օգտվելու համար:</p>
Եվրոպա փոքր և միջին կապիտալով	◆	<p>Ավելի տեղայնացված լինելով՝ SMID-ները պակաս են տուժում ԱՄՆ տուրբուլենտ պատճառով, միևնույն ավելի շատ են ենթարկված Գերմանիայի ծրագրին և Ուկրաինայի վերակառուցմանը: Չսպասե՛ք ցածր գնին, նպաստող շահույթին և ԵԿԲ տոկոսադրույթների կրճատումներից շահելու հնարավորությանը՝ մենք նախընտրում ենք եվրոպական փոքր և միջին կապիտալացված ընկերությունները:</p>
Ճապոնիա	○ ◆ ←	<p>Առաջին կիսամյակում անցում չեզոք դիրքորոշման, ապա երկրորդ կիսամյակում աճին միտված քաղաքականությունների շրջանակում ներդրումների ավելացման</p> <p>Նոր, անվանական աճի կողմնակից վարչապետի ընտրությունը նպաստում է ճապոնական բաժնետոմսերին: Դեֆլյացիայից դուրս գալու վճռականությունն ու կորպորատիվ բարեփոխումների շարունակականությունը միջնաժամկետ փաստարկներ են, սակայն առաջին կիսամյակում մենք կթուլանանք այս դրական դիրքորոշումը՝ նախապատվությունը տալով զարգացող շուկաներին և ԱՄՆ-ին:</p>
Խաղաղօվկիանոսյան առանց Ճապոնիայի	◆ ○ →	<p>Առայժմ զգուշությամբ, սակայն շահութաբերությունը կբարելավի կանխատեսումը</p> <p>Եկամտաբերության հետ մնացող Գ/Ե հարաբերակցության ցուցանիշի պատմական միջինից զգալիորեն բարձր լինելու պատճառով (տուլիսկ բացարձակ և հարաբերական իմաստով) տարածաշրջանը (հատկապես Ավստրալիան, որը ներկայացնում է MSCI Pacific ex Japan ինդեքսի 63%-ը) ներկայումս գրավիչ չէ, սակայն շահութաբերությունը պետք է բարելավվի:</p>
Զարգացող շուկաներ	◆ ○ →	<p>Մի փոքր դրական՝ ընտրողական մոտեցումով</p> <p>Չարգացող շուկաների բաժնետոմսերը շահում են զարգացող շուկաների աճի առավելությունից և Դաշնային պահուստի տոկոսադրույթների իջեցումից: Այնուամենայնիվ, ընտրողական մոտեցումն առանցքային է: աշխարհաքաղաքական վերակառուցումը, ԱՄՆ սակագները և ներքին ու արտաքին դինամիկայի միջև տարբերությունները նշանակում են, որ արդյունքները կփոխվեն, հնարավորությունների նկատելի օջախներ կան Լատինական Ամերիկայում, Արևելյան Եվրոպայում և մի շարք ասիական երկրներում:</p>
Չինաստան	◆ ○ →	<p>Առայժմ չեզոք, սակայն բարելավման հնարավորությամբ</p> <p>Ընդհանուր առմամբ Չինաստանի բաժնետոմսերը կարող են շահել ներքին պահանջարկի աճից՝ պարտատոմսերի ցածր եկամտաբերության ֆոնին, միևնույն օտարերկրյա ներդրողների հոսքերը կարող են դանդաղ մնալ համաշխարհային անորոշության պատճառով: Կապիտալը, ամենայն հավանականությամբ, ընտրողաբար կհոսի դեպի ակնհայտ համեստական առավելություն ունեցող ոլորտներ, մասնավորապես էլեկտրական մեքենաների մատակարարման շղթա, վերականգնվող էներգիա և տեխնոլոգիական հատված:</p>
Հնդկաստան	◆	<p>Մի փոքր դրական՝ երկարաժամկետ աճից օգտվելու համար</p> <p>Հնդկաստանի բաժնետոմսերն առաջարկում են երկարաժամկետ աճի ներուժ: Ամենաիտաքցիվ հնարավորությունները գտնվում են ենթակառուցվածքային նախագծերում, որոնք լուծում են իրական խցանումները, զրբալ մատակարարման շղթաների փոփոխություններին կապված արտադրական ոլորտի ընկերություններում և ֆինանսական ներառման տեխնոլոգիաներում:</p>

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, 2025թ. նոյեմբերի 17-ի դրությամբ:

ԱՎՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԵՐԻ ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐ

2026թ. առաջին կիսամյակի դրությամբ ֆիքսված եկամտով գործիքների հեռանկարներ

- ◆ Դիբորդում 2025թ. նոյեմբերի 17-ի դրությամբ
- 2026թ. առաջին կիսամյակում շարժման սպասվող ուղղությունը
- 2026թ. առաջին կիսամյակում փոփոխության ուղղությունը

Ֆիքսված եկամուտը համեմատած արտարժույթի շուկայի հետ

	---	--	-	./=	=	≈/+	+	++	+++		
ԱՄՆ Դիուրացիա										◆	<p>Զեզոք, սպասել ավելի բարձր հասանելիության</p> <p>2-ամյա եկամտաբերությունը հաշվի է առնում չափազանց ագրեսիվ տոկոսադրույքների կրճատումները, իսկ գոյական վաստակ մակարդակները թվում են չափազանց ցածր: Մենք հասանելիության կետ համարում ենք ավելի բարձր եկամտաբերությունը, սակայն սպառողական թույլ պահանջարկը կարող է ի վերջո արդարացնել ավելի ցածր եկամտաբերությունը:</p>
ԵՄ Դիուրացիա										◆ → ○	<p>Կորի առաջաին հատվածը կշահի ԵԿԲ-ի տոկոսադրույքների կրճատումներից</p> <p>Թույլ աճը կարող է ստիպել ԵԿԲ-ին կրճատել տոկոսադրույքները և երկու անգամ՝ մինչև 2026 թվականի կեսը, իսկ շուկաները դեռևս դա հաշվի չեն առնում: Այնուամենայնիվ, միայն կորի առաջաին հատվածում կա շահելու հնարավորություն:</p>
ՄԹ Դիուրացիա										◆	<p>Դրական ժամկետայնություն՝ շարունակական տոկոսադրույքների կրճատումների ֆոնին</p> <p>Թույլ աճը և տոկոսադրույքների շարունակական կրճատումները պետք է հանգեցնեն Մեծ Բրիտանիայի սփրեյներին ներդրումները՝ համեմատած G7-ի մյուս երկրների հետ:</p>
Ճապոնիա Դիուրացիա										◆ → ○	<p>Կարճաժամկետ հատվածի կողմնակալություն</p> <p>Փոխհատուցողական ֆիսկալ քաղաքականությունն ու ճապոնիայի Բանկի հետագա տոկոսադրույքների բարձրացումները հիմնավորում են կարճ դիբորդների շարունակական պահպանման անհրաժեշտությունն առաջիվ և դիբորդի չեզոքացման միտումը՝ եկամտաբերության վերագնահատումից հետո:</p>
ԱՄՆ Ներդրումային Դասի վարկ (US IG Credit)										◆	<p>Զեզոք դիբորդ՝ մինչև սփրեյները պատմականորեն ներ են</p> <p>Սփրեյները մոտ են պատմական նվազագույններին, իսկ բարձր կապիտալային ծախսերը կարող են մեծացնել առաջարկը, սակայն վարկային հիմնարար ցուցանիշներն ամուր են:</p>
ԱՄՆ բարձր եկամտաբերությամբ վարկ (US HY Credit)										◆	<p>Անիստուր առումով, թանկ և խոցելի</p> <p>Թանկ գները շուկան խոցելի են դարձնում տարածաշրջանային բանկերի և սպառողական կախվածություն ունեցող բիզնեսների վատ կողմնակալությունների նկատմամբ:</p>
ԵՄ Ներդրումային Դասի վարկ (EU IG Credit)										◆	<p>Առավելություն տալ ներդրումային կարգի բարձր որակի բալանսի կառավարմանը</p> <p>Բալանսի կառավարումը շարունակում է մնալ պաշտպանողական, մինչդեռ առաջարկը չափավոր ԱՄՆ-ի վերադարձի այս դասին հոսքերը պետք է շարունակեն ներդրումները սփրեյները:</p>
ԵՄ բարձր եկամտաբերությամբ վարկ (EU HY Credit)										◆	<p>Չզուլավոր ենք կորպորատիվ թույլ կողմերի նկատմամբ</p> <p>Ավելի խոցելի է կորպորատիվ թույլ կողմերի նշանների նկատմամբ, քան էվրոպական ներդրումային դասի (IG) պարտատուները, իսկ առաջարկը շարունակում է մնալ բարձր:</p>
Չարգացող շուկաների Կոշտ Արժույթի պարտատուներ (EM bonds HC)										◆	<p>Չարգացող շուկաների Կոշտ Արժույթը շարունակում է մնալ գրավիչ</p> <p>Մենք շարունակում ենք դրական մոտենալ Չարգացող շուկաների Կոշտ Արժույթի պարտատուներ նկատմամբ, որոնք առաջարկում են գրավիչ եկամտաբերություն: Տեխնիկական ցուցանիշները շարունակում են նպաստել: Մեղմ սփրեյների պայմաններում մենք ընտրողական ենք առաջնահերթություն տալով բարձր եկամտաբերությանը:</p>
Չարգացող շուկաների Տեղական Արժույթի պարտատուներ (EM bonds LC)										◆	<p>Դրական, ընտրողական մոտենում</p> <p>Տեղական արժույթով Չարգացող շուկաների եկամտաբերությունը, ըստ կանխատեսման, կշարունակի նվազել վերահսկվող գնաճի և դրամավարկային քաղաքականության թուլացման սցենարի դեպքում: Առավել նախընտրելի են CEEMEA-ն, մի փոքր չափով Լատինական Ամերիկան, և ընտրողական մոտենում Ասիայի շուկաներին:</p>
Չարգացող շուկաների կորպորատիվ վարկային գործիք (EM Corp.)										◆	<p>Դրական՝ որակի կողմնակից</p> <p>Չարգացող շուկաների կորպորատիվ վարկային գործիքների մեջ մենք շարունակում ենք նախընտրել բարձր եկամտաբերության գործիքները և հավասարաշեշտ դրանք որակի հետ:</p>
Չարգացող շուկաների արտարժույթ vs USD										◆	<p>Երկար դիբորդ Չարգացող շուկաների արտարժույթի շուկայում դուրսի թուլացման ֆոնին</p> <p>Չարգացող շուկաների արժույթները կարող են շահել դուրսի թուլացած միջավայրում: Մենք նախընտրում ենք բարձր եկամտաբերությամբ արժույթները Լատինական Ամերիկայում, CEEMEA-ում և Ասիայում և զգուշավոր ենք ցածր եկամտաբերություն ունեցող արժույթների նկատմամբ Ասիայում:</p>
USD vs G10										○ ← ◆	<p>Կանխատեսվում է դուրսի շարունակական թուլացումը</p> <p>Մեր դիբորդումը պահպանվում է 2026 թվականին թույլ, չնայած ոչ գծային, դուրսի վերաբերյալ:</p>

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ 2025 թ. նոյեմբերի 17-ի դրությամբ: Աղյուսակի ցույց է տալիս յուրաքանչյուր ակտիվների դասի բացառապես տեսլետները և արտառայումը է 9 անդադարային միջավայրով, որտեղ = նշանակում է չեզոք դիբորդը: Այս նյութը ներկայացնում է շուկայի գնահատումը կոնկրետ ժամանակահատվածում և չի նախատեսվում որպես ապագա իրադարձությունները կանխատեսում կամ ապագա արդյունքների երաշխիք: Այս տեղեկատվությունը կախված է ընկալիչ ընթացքի կողմից որպես չեզոքություն, ներդրումային նորոգումներում կամ առաջադրություն ունեցող կամ կոնկրետ արժեքների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը հիմնարկում է միայնակական և կիսաանհատական էնթուզիստների կողմից: Այս տեղեկատվությունը պահանջարկի և ֆոնդիային: Այս տեղեկատվությունը պի ներկայացնում որևէ Բոտոմի արտադրությունը ընթացիկ, անցյալ կամ ապագա արժույթների բաշխման կամ պորտֆոլի իրական վիճակը: Բոտոմի արտադրությունը ցույց է տալիս GIC-ի բացառապես ԲՄ տեսլետները: * Ներկայացնում է մի քանի գաղափարային շուկաների արժույթների համախմբված տեսլետները:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Մակրոտնտեսական կանխատեսումներ

Մակրոտնտեսական կանխատեսումներ						
Տարեկան միջիններ, %	Իրական ՀՆԱ աճ, S/S, %			Գնաճ (ՍԳԻ), S/S, %		
	2025	2026	2027	2025	2026	2027
Չարգացած երկրներ	1.6	1.4	1.6	2.6	2.4	2.1
Միացյալ Նահանգներ	1.9	1.9	2.0	2.9	3.0	2.2
Եվրագոտի	1.3	0.9	1.3	2.1	1.7	1.8
<i>Գերմանիա</i>	0.3	0.8	1.1	2.1	1.9	1.9
<i>Ֆրանսիա</i>	0.6	0.6	1.1	1.1	1.8	1.9
<i>Իտալիա</i>	0.5	0.6	0.6	1.9	1.7	1.8
<i>Իսպանիա</i>	2.8	1.9	1.8	2.4	2.0	2.2
ՄԹ	1.2	0.9	1.3	3.3	2.7	2.2
Ճապոնիա	1.3	0.8	0.7	3.1	2.1	2.0
Չարգացող երկրներ	4.3	4.0	4.1	3.6	3.2	2.8
Չինաստան	4.9	4.4	4.2	0.0	-0.2	-0.2
Հնդկաստան	7.0	6.3	6.5	2.2	4.3	4.5
Ինդոնեզիա	4.9	4.9	5.1	1.9	3.2	2.8
Բրազիլիա	2.2	1.7	2.1	5.0	3.9	3.6
Մեքսիկա	0.7	1.3	1.9	3.8	3.5	3.8
Ռուսաստան	1.0	1.1	1.6	8.8	5.9	5.0
Հարավային Աֆրիկա	1.2	1.4	1.8	3.3	3.3	3.0
Թուրքիա	3.5	3.0	3.7	35.4	26.1	19.3
Աշխարհ	3.3	3.0	3.1	3.2	2.9	2.5

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ, ԱՄՅ, Բլումբերգ: Աղյուսակը ցույց է տալիս մոտավոր կանխատեսումներ՝ հիմնված 2025թ. նոյեմբերի 12-ի դրությամբ հասանելի տեղեկատվության վրա, և ներառում է մինչ այդ իրականացված սակագները:

Կենտրոնական բանկերի պաշտոնական տոկոսադրույքների կանխատեսումներ, %					
	2025թ. նոյեմբերի 11	Ամուսնի 2026թ. եռ2	Համաձայնեցված 2026թ. եռ2	Ամուսնի 2026թ. եռ4	Համաձայնեցված Q4 2026
Միացյալ Նահանգներ*	4.00	3.25	3.50	3.25	3.10
Եվրագոտի**	2.00	1.50	1.95	1.50	2.00
Միացյալ Թագավորություն	4.00	3.50	3.60	3.25	3.40
Ճապոնիա	0.50	0.75	0.78	1.00	0.95
Չինաստան***	1.40	1.30	1.25	1.20	1.20
Հնդկաստան***	5.50	5.00	5.24	5.00	5.23
Բրազիլիա	15.00	13.25	13.38	11.25	12.11
Ռուսաստան	16.50	13.00	13.14	11.00	10.70

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ: Կանխատեսումները 2025թ. նոյեմբերի 12-ի դրությամբ են: CPI՝ սպառողական գների ինդեքս:
* Դաշնային ֆոնդերի վերին թիրախային միջակայք: ** Ավանդի տոկոսադրույք: *** Չինաստանի ժողովրդական բանկի 7-օրյա հետգնման պարտատոմսերի տոկոսադրույք: 2026թ. երկրորդ եռամսյակը նշանակում է 2026թ. հունիսի վերջը, 2026թ. չորրորդ եռամսյակը նշանակում է 2026թ. դեկտեմբերի վերջը: Ընթացիկ տոկոսադրույքները և համաձայնեցված տվյալները Բլումբերգից են:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Ֆինանսական շուկաների կանխատեսումներ

Պարտատոմսերի եկամտաբերություն

2-ամյա պարտատոմսերի եկամտաբերության կանխատեսումներ, %

	2025թ. նոյեմբերի 17	Ամուսնի եռ2 26	+6-ամսվա կանխատեսում	Ամուսնի եռ4 26	+12-ամսվա կանխատեսում
Միացյալ Նահանգներ	3.6	3.5	3.6	3.5	3.6
Գերմանիա	2.0	1.6	2.1	1.6	2.2
Միացյալ Թագավորություն	3.8	3.7	3.8	3.6	3.9
Ճապոնիա	0.9	1.1	1.1	1.1	1.2

10-ամյա պարտատոմսերի եկամտաբերության կանխատեսումներ, %

	2025թ. նոյեմբերի 17	Ամուսնի եռ2 26	+6-ամսվա կանխատեսում	Ամուսնի եռ4 26	+12-ամսվա կանխատեսում
ԱՄՆ	4.1	4.4	4.2	4.5	4.3
Գերմանիա	2.7	2.7	2.8	2.8	2.9
Միացյալ Թագավորություն	4.5	4.4	4.7	4.4	4.8
Ճապոնիա	1.7	1.9	1.9	1.8	2.0

Բաժնետոմսերի կանխատեսումներ 2026թ. 4-րդ եռամսյակի համար

MSCI ինդեքսի արժեքներ	ԱՄՆ	Եվրոպա	ԵՄ	Մթ	Ճապոնիա	Խաղաղօվկ, բացի Ճապոնիայից	Աշխարհ	World AC
11/11/2025	6,432	2,265	338	2,764	2,030	1,552	4,325	991
Ցածր սահման	5,809	2,066	310	2,480	1,870	1,396	3,933	901
Բարձր սահման	7,340	2,570	390	2,990	2,260	1,760	4,890	1,130

	2025թ. նոյեմբերի 14	Ամուսնի եռ2 26	Փոխարժեքներ Համաձայնեցված եռ2 26	Ամուսնի եռ4 26	Համաձայնեցված եռ4 26
EUR/USD	1.16	1.22	1.20	1.19	1.21
EUR/JPY	179	176	173	165	171
EUR/GBP	0.88	0.90	0.88	0.88	0.87
EUR/CHF	0.93	0.98	0.95	0.99	0.95
EUR/NOK	11.65	11.30	11.40	10.99	11.25
EUR/SEK	10.96	10.88	10.80	10.45	10.70
USD/JPY	154	144	145	138	142
AUD/USD	0.65	0.69	0.68	0.70	0.68
NZD/USD	0.57	0.59	0.61	0.60	0.61
USD/CNY	7.10	7.0	7.0	6.8	6.95

Աղբյուր՝ Ամուսնի ներդրումային ինստիտուտ: Կանխատեսումները 2025 թ. նոյեմբերի 11-ի դրությամբ են: 2026թ. երկրորդ եռամսյակը նշանակում է 2026թ. հունիսի վերջը, 2026թ. չորրորդ եռամսյակը նշանակում է 2026թ. դեկտեմբերի վերջը:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Գլխավոր խմբագիրներ



Անսիկա Դեֆենդ
Ամուսնի և Երրորդական ինստիտուտի ղեկավար



Վինսենթ Սորոսիեր
Խմբի ԳՆՏ



Ֆիլիպ Դ'Օրգեվալ
Խմբի ԳՆՏ տեղակալ

Խմբագիրներ



Կլաուդիա Բերտինո
«Ամուսնի և Երրորդական իրաւարարություն» ղեկավար, ԱՆԻ*



Լորա Ֆիրո
Երրորդական վերլուծությունների և համախորհրդի հարցերով բաժնի ղեկավար, ԱՆԻ*



Ստանա Պատանայիկ
Հրատարակման և թվային ռազմավարության ղեկավար, ԱՆԻ*

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՅՆՈՒՉ

Ֆիքսված եկամտի ռազմավարության գլոբալ ղեկավար, ԱՆԻ*

ԱԼԵՍԻԱ ԲԵՐՆԱՐԴԻ

Չարգացող մակրոռազմավարության ղեկավար, ԱՆԻ*

ԺԱՆ-ԲԱՊՏԻՍՏ ԲԵՐՏՈՆ

Պորտֆելի ռազմավարության վերլուծություն, ԱՆԻ*

ԴԻԴԻԵ ԲՈՐՈՎՍԿԻ

Մակրո քաղաքականության գծով հետազոտությունների ղեկավար, ԱՆԻ*

ՖԵՂԵՐԻԿՈ ՍԵՍԱՐԻՆԻ

Չարգացած շուկաների փոխարժեքային ռազմավարության ղեկավար, ԱՆԻ*

ԴԵՐՈՐԱ ԴԵԼՈՆ

ՆՇ մակրոռազմավարության ավագ մասնագետ, ԱՆԻ*

ՍԻԼՎԻԱ ԴԻ ՍԻԼՎԻՈ

Խաչածև ակտիվների ռազմավարության հարցերով ավագ մասնագետ, ԱՆԻ*

ՋԼԵՅԻ ԶՈՒՄԵԳ

ՆՇ մակրոռազմավարության ավագ մասնագետ, ԱՆԻ*

ԷՐԻԿ ՄԻՇՈՆ

Կապիտալի գլոբալ ռազմավարության ղեկավար, ԱՆԻ*

ՊՈԼԵՆԱ ԼԻՍԻ

Ներդրումների վերլուծություն եվ հաճախորդների հարցերով մասնագետ, ԱՆԻ*

ԼՈՐԵՆՑՈ ՊՈՐՏԵԼԻ

Խաչածև ակտիվների ռազմավարության ղեկավար, ԱՆԻ*

ՄԱՐՍՈՒԴ ՊՐԱՂԱՆ

Գլոբալ մակրոտնտեսության գծով ղեկավար, ԱՆԻ*

ԱՆՆԱ ՈՈՉԵՆԲԵՐԳ

Աշխարհաքաղաքականության գծով ղեկավար, ԱՆԻ* ԳԻ ՍՏԵՄՂ

Չարգացած շուկաների ռազմավարությունների ղեկավար, ԱՆԻ*

Այուշ Տամբի

Բաժնետոմսերի ռազմավարության ավագ մասնագետ, ԱՆԻ*

ԱՆԱԼԻԶԱ ՈՒՍԱՐԴԻ, CFA

Ավագ տնտեսագետ, Առաջադեմ տնտեսության մոդելավորման ղեկավար, ԱՆԻ*

Դիզայն և վիզուալիզացիա

ԹԻՄՐԱ ԲԵՆԵՏԻ

Թվային գեոարվեստական տնօրեն և ռազմավարություն մշակող, ԱՆԻ*

ՎԻՆԱՆ ՖԼԱՍՅՈՒ

Գրաֆիկայի և տվյալների վիզուալիզացիայի հարցերով կառավարիչ, ԱՆԻ*

Խմբագրի տեղակալ

Սայ Զրոսի Թրեմել

Երրորդական հարցերով մասնագետ, ԱՆԻ*

Ղեկավար խումբ

ԴՈՄԻՆԻԿ ՎԱՐԵԼ-ԲԻԼԼԻԱՐ

Իրական և այլընտրանքային ակտիվների գծով ղեկավար

ԱՍՈՐԻ ԴՈՐՍԵՅ

Ֆիքսված եկամտի գծով ղեկավար

ԲԱՐՐԻ ԳԼԱՎԻՆ

Բաժնետոմսերի գծով ղեկավար

ՋՈՆ ՕԹՈՒԼ

Խաչածև ակտիվների լուծումների գծով ղեկավար

ՖՐԱՆԶԵՍԿ Ո ՍԱՆԴՐԻՆԻ

Բազմակտիվների ռազմավարության ղեկավար

Շնորհակալություններ

Մենք նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Միքայել Բելայչին, Պիեր Բրուսին, Փոլ Կարոլային, Ուշվալ Դինգրային, Պատրիկ Դրոզդիկին, Դելֆին Ջորջեսին, Էլիս Գիրոնդոյին, Լորեն Ստակյոլին:

Միշտ ստացեք թարմ տվյալներ

Դիտեք այս փաստաթղթի թվային տարբերակը, սկանավորեք կոդը [ՍԵՂԱՆԵԼ](#)



Trust must be earned

Ամունդի Ներդրումային ինստիտուտ



Ավելի ու ավելի բարդացող և փոփոխվող աշխարհում ներդրողներին անհրաժեշտ է առավել լավ պատկերացում ունենալ իրենց ներդրումային միջավայրի և գործելակերպերի զարգացումների վերաբերյալ՝ ակտիվների բաշխման հարցում որոշում կայացնելու և պորտֆելները ճիշտ կառուցելու համար: Գտնվելով գլոբալ ներդրումային գործընթացի կենտրոնում, Ամունդի ներդրումային ինստիտուտի նպատակն է ներկայացնել առաջադեմ նորարարական գաղափարներ, խորացնել այս թեմաների վերաբերյալ խորհրդատվությունը, վերապատրաստումը և առօրյա երկխոսությունը բոլոր ակտիվների վերաբերյալ իր բոլոր հաճախորդների՝ դիստրիբյուտորների, հաստատությունների և կորպորատիվ հաճախորդների համար: Ամունդի ներդրումային ինստիտուտը միավորում է «Ամունդի» ընկերության հետազոտական, շուկայի ռազմավարությունը, ներդրումային վերլուծությունները և ակտիվների տեղաբաշխման վերաբերյալ խորհրդատվական գործունեությունը: Դրա նպատակն է կանխատեսել Ամունդիի հեռանկարները և ներդրումային առաջարկությունները:

Ստացեք վերջին թարմացումները հետևյալի վերաբերյալ՝



-
-
-
-
-
-

- Աշխարհաքաղաքականություն
- Տնտեսություն և շուկաներ
- Պորտֆելի ռազմավարություն
- ԲՍԿ իրավիճակ
- Կապիտալի շուկայի վերաբերյալ
- ենթադրություններ
- Իսպաձև ակտիվների ուսումնասիրություն
- Իրական և այլընտրանքային ակտիվներ

Այցելեք մեզ հետևյալ հասցեով՝



Այցելեք Հետազոտական կենտրոնը

Amundi

Investment Solutions

Trust must be earned

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՊՎԱԿՈՒՄՆԵՐ

Արժույթների հապավումներ. USD – ԱՄՆ դոլար, BRL – բրազիլական ռիալ, JPY – ճապոնական իեն, GBP – Մեծ Բրիտանիայի ֆունտ, EUR – եվրո, CAD – կանադական դոլար, SEK – շվեդական կրոն, NOK – Նորվեգական կրոն, CHF – շվեյցարական ֆրանկ, NZD – Նորգվեյնական դոլար, AUD – ավստրալական դոլար, CNY – չինական յուան, CLP – չիլիական պեսո, MXN – մեքսիկական պեսո, IDR – ինդոնեզական ռուպի, RUB – ռուսական ռուբլի, ZAR – հարավաֆրիկյան ռանդ, TRY – թուրքական լիրա, KRW – հարավկորեական վոն, THB – թայլանդական բատ, HUF – հունգարական ֆորինտ:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

ՄՄՄԿ-ի տեղեկությունները կարող են գործածվել միայն Ձեր ներքին օգտագործման համար, չեն կարող վերադարձվել կամ վերատարածվել որևէ ձևով և չեն կարող գործածվել որպես որևէ ֆինանսական գործիքի կամ պրոդուկտի կամ գործակցի հիմք կամ դրա բաղադրիչ: ՄՄՄԿ-ի որևէ տեղեկություն Նախատեսված չէ լինելու Ներդրումային խորհրդատվության կամ որևէ տեսակի ներդրումային որոշում կայացնելու (կամ դրանից զերծ մնալու) առաջարկություն, և դրա վրա չի կարելի հիմնվել որպես այդպիսին: Պատմական տվյալները և վերլուծությունը չպետք է ընկալվեն որպես որևէ հետագա կատարողականի վերլուծության, կանխատեսման կամ կանխագուշակման մասին Նշում կամ երաշխիք: ՄՄՄԿ-ի տեղեկությունները տրամադրվել են «այնպես, ինչպես կա» հիմքով, և սույն տեղեկություններն օգտագործողն ստանձնում է սույն տեղեկությունների ցանկացած օգտագործման բոլոր ռիսկերը: ՄՄՄԿ-ն, դրա փոխկապակցված անձինք և յուրաքանչյուր անձ, որը ներգրավված է ՄՄՄԿ-ի որևէ տեղեկություն կազմելուն կամ կապված է դրա հետ (միասին «ՄՄՄԿ կողմեր»), սույն տեղեկությունների մասով բացահայտ հրաժարվում է բոլոր երաշխիքներից (այդ թվում, առանց սահմանափակման, բնօրինակության, ճշգրտության, ամբողջականության, ժամանակին լինելու, խախտում չկատարելու, վաճառքի համար պիտանիության և կոնկրետ նպատակին համապատասխանության վերաբերյալ ցանկացած երաշխիքից): Չսահմանափակելով վերնշաղկապ որևէ դրույթ, ՄՄՄԿ որևէ կողմ որևէ դեպքում չի կրում որևէ պատասխանատվություն որևէ ուղղակի, անուղղակի, հատուկ, պատահական, պատժիչ, հետևանքային (այդ թվում, առանց սահմանափակման, կորցրած շահույթի) կամ որևէ այլ վնասի համար: (www.msctibarra.com): SM արդյունաբերությունների դասակարգման համաշխարհային ստանդարտը (ԱՂՅԱ) մշակվել է «Ստենդոր ընդ Փուրգ»-ի և ՄՄՄԿ-ի կողմից և դրանց բացառիկ սեփականությունն ու ծառայությունների ապրանքանիշն է: Ոչ «Ստենդոր ընդ Փուրգ»-ը, ՄՄՄԿ-ն և ոչ էլ ԱՂՅԱ որևէ դասակարգում մշակելուն կամ կազմելուն ներգրավված որևէ այլ կողմ որևէ բացահայտ կամ ենթադրյալ երաշխիք կամ հավաստիացում չի տալիս այդ ստանդարտի կամ դասակարգման (կամ դրանց օգտագործումից ստացվելից արդյունքի) վերաբերյալ, և այդ բոլոր կողմերը սույնով բացահայտ հրաժարվում են ցանկացած այդպիսի ստանդարտի կամ դասակարգման աննշտաբան բնօրինակության, ճշգրտության, ամբողջականության, վաճառքի համար պիտանիության կամ կոնկրետ նպատակին համապատասխանության վերաբերյալ ցանկացած երաշխիքից: Չսահմանափակելով վերոնշյալ որևէ դրույթ, «Ստենդոր ընդ Փուրգ»-ը, ՄՄՄԿ-ն, դրան որևէ փոխկապակցված անձ կամ ԱՂՅԱ որևէ դասակարգում մշակելուն կամ կազմելուն ներգրավված որևէ երրորդ կողմ որևէ պատասխանատվություն չի կրում որևէ ուղղակի, անուղղակի, հատուկ, պատժիչ, հետևանքային կամ որևէ այլ վնասի (այդ թվում՝ կորցրած շահույթի) համար, նույնիսկ եթե ծանուցվել է այդ վնասների հնարավոր լինելու մասին:

Սույն փաստաթուղթն ունի միայն տեղեկատվական նպատակներ: Սույն փաստաթուղթը վաճառքի առաջարկ, գնման առաջարկի հրավեր կամ որևէ արժեթղթի կամ որևէ այլ պրոդուկտի կամ ծառայության առաջարկություն չէ: Ցանկացած արժեթուղթ, պրոդուկտ կամ ծառայություն, որին կապված է կատարվում, չի կարող Ձեր պետությունում համապատասխան մարմնում գրանցվել վաճառքի համար և չի կարող Ձեր պետությունում կարգավորվել կամ վերահսկվել որևէ պետական կամ համանման մարմնի կողմից: Սույն փաստաթուղթում պարունակվող ցանկացած տեղեկություն կարող է օգտագործվել միայն Ձեր ներքին օգտագործման համար, չի կարող վերադարձվել կամ վերատարածվել որևէ ձևով և չի կարող օգտագործվել որպես որևէ ֆինանսական գործիքի կամ պրոդուկտի կամ գործակցի հիմք կամ դրա բաղադրիչ: Ավելին, սույն փաստաթուղթում պարունակվող ոչինչ նախատեսված չէ հարկային, իրավական կամ ներդրումային խորհրդատվություն տրամադրելու համար: Եթե այլ բան Նշված չէ, ապա սույն փաստաթուղթում պարունակվող բոլոր տեղեկություններն ստացված են «Ամուլոդի ասեթ մենեջմենթ ԵսԱԵս» ընկերությունից և 2024 թվականի սեպտեմբերի 5-ի դրությամբ են: Բազմազանեցումը եկամուտ չի երաշխավորում կամ չի պաշտպանում կորստից: Սույն փաստաթուղթը տրամադրվել է «այնպես, ինչպես կա» հիմքով, և սույն տեղեկություններն օգտագործողն ստանձնում է սույն տեղեկությունների ցանկացած օգտագործման բոլոր ռիսկերը: Պատմական տվյալները և վերլուծությունը չպետք է ընկալվեն որպես որևէ հետագա կատարողականի վերլուծության, կանխատեսման կամ կանխագուշակման մասին Նշում կամ երաշխիք: Շուկայի և շուկայի միտումների վերաբերյալ արտահայտված տեսակետները հեղինակի տեսակետներն են և պարտադիր չէ, որ լինեն «Ամուլոդի ասեթ մենեջմենթ ԵսԱԵս» ընկերության տեսակետներն ու ցանկացած պահի ենթակա են շուկայի և այլ պայմանների հիման վրա փոփոխության, և չեն կարող լինել հավաստիացումներ առ այն, որ երկրները, շուկաները կամ ոլորտները կհամապատասխանեն ակնկալիքներին: Սույն տեսակետները պետք չէ հիմք ընդունել որպես ներդրումային խորհրդատվություն, արժեթղթի առաջարկություն կամ «Ամուլոդի» ընկերության որևէ պրոդուկտի առջնվաճառքի մասին Նշում: Ներդրումը ներառում է ռիսկեր, այդ թվում՝ շուկայական, քաղաքական, իրացվելիության և արժույթի հետ կապված ռիսկեր: Ավելին, «Ամուլոդին» որևէ դեպքում չի կրում որևէ պատասխանատվություն դրա հետևանքով առաջացած որևէ ուղղակի, անուղղակի, հատուկ, պատահական, պատժիչ, հետևանքային (այդ թվում, առանց սահմանափակման, կորցրած շահույթի) կամ որևէ այլ վնասի համար: [Առաջին օգտագործման ամսաթիվը՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ը:](#)

Փաստաթուղթը տրամադրվել է «Ամուլոդի ասեթ մենեջմենթ»՝ «société par actions simplifiée- ԵսԱԵս» ընկերության կողմից, որն ունի €1,143,615,555 կապիտալ . Պորտֆելային կառավարիչը կարգավորվում է AMF-ի (Ֆինանսական շուկաների կարգավորող մարմնի) կողմից՝ GP04000036 համարի ներքո. Գլխավոր գրասենյակ՝ Պաստյուլ ճեմուղի 91-93, Փարիզ 75015, Ֆրանսիա. 437 574

Փաստաթղթի ID: 5000444

Լուսանկարները՝ Istockphoto @ Gettyimages: Laurent Renault/EyeEm, Laurent Renault/EyeEm, Laurent Renault/EyeEm, Mlenny- Tobias Aceborn, Chalffy, Gang Zhou, Rudy Sulgan, Rudy Sulgan, Lonely Planet, Nasmah Muntaha.

Պատկերները՝ TheNounProject